# ՍԻՕՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇՐՋԱՆ ՄԻԱՄՆԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1872

digitised by A.R.A.R.@

2013




# ՍԻՕՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 1.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆՎԱՐ 31.
1872.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ


## ԱՆՑԱԾ ՕՐԵՐ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐ

ԱՆՑԱԾ ՕՐԵՐՆ յիշելը, անցած օրերուն վրայ մերթ ընդ մերթ խօսիլը և խորհիլը, շատ բնական է մարդոյ համար, թէ ուրախական ըլլին այս յիշատակները և թէ տրտմական։

Պատմագիրները մարդկութեան նախկին օրերէն կը սկսին իրենց պատմութիւնը։ Իմաստասէրները նախկին իմաստասէրներէն կը սկսին իրենց իմաստասիրութիւնը։ Աստուածաբանները խանդաղատանօք կը յիշեն Ադամն ու Դրախտը։ Քրիստոնեայքն ամեն օր կը յիշեն ու կը տօնեն նախկին Եկեղեցւոյ առաքեալներն, վարդապետներն, նահատակներն և մարտիրոսներն

Անցած օրերու յիշողութիւնը, ինչպէս որ բնական է ընդհանուր մարդկութեան և ազգաց կենաց նկատմամբ, նոյնպէս բնական է նաև մասնաւոր անհատներու անհատական կենաց վերաբերութեամբ։

Այո, անցած օրեր, կը գոչեն ծերունիները, որոնք տեղէն շարժելու համար՝ օժանդակի կը կարօտին, քալելու համար՝ գաւազանի, ծամելու համար՝ փափուկ ուտելիքի, տեսնելու կամ կարդալու համար՝ ակնոցի, լսելու համար՝ բարձրաձայն հնչման, և հանգիստ քնանալու համար՝ թանձր ծածկոցի։



digitised by A.R.A.R.@

Ա՜խ, անցած օրեր, կը հառաչեն պառաւները, երբ հայելւոյ մէջ խորշոմալից կը տեսնեն իրենց դէմքը և սպիտակահեր իրենց գլուխը։ Նոր կըզգան, որ հրճուելու կարողութիւն չունին, ամուսնելու զօրութիւն և ասղնեգործելու տեսութիւն։

Ա՜խ, անցած օրեր, կ՚աղաղակեն աղքատները, որոնք հարուստ վիճակէ չքաւորութեան հասած են, ճոխութենէ՝ կարօտութեան, պարգաբանքէ՝ անպարգութեան, տէրութենէ՝ ծառայութեան և տիկնութենէ աղախնութեան։

Ա՜խ, անցած օրեր, կը հեծեն սիրուն զաւակներ և սիրելիներ կորուսանողները, որոնք նոցա հետ անցուցած ժամերը կը յիշեն, նոցա պատկերը իրենց կը ներկայացնեն, նոցա թոթովանքները և խօսակցութիւնները կը կրկնեն, նոցա ընթացից և վարմանց մէն մի յիշատակը կը մտաբերեն և նոցա ելքը, նոցա մուտքը, նոցա գիշերն ու ցերեկը կը պատկերացնեն։

Ա՜խ, անցած օրեր, կ՚արտասուեն պանդուխտները, որոնք չեն տեսներ իրենց հայրենի քաղաքն ու բնակութիւնը, իրենց սնուած օդն ու ջուրը, իրենց ընտանիքն ու ազգականքը, իրենց ունակացած հասարակութիւնն ու ընկերութիւնը, իրենց լսած երգն ու նուագը, իրենց տեսած հանդէսն ու զբօսանքը, իրենց վարժուած վարքն ու բարքը, իրենց ընտելացած խօսքն ու զրոյցը, իրենց սիրած սիրան ու դէմքը, իրենց ախորժած ձեւն ու տարազը, իրենց տեսած եղանակն ու ժամանակը, իրենց վայելած երկինքն ու երկիրը։

Ա՜խ, անցած օրեր, կը գոչեն շարժելու և գործելու միջոցներէ զրկուածները և զանազան կապերով կապուածները, որոնք երբեմն կ՚եռային, կը շարժէին, կը մաքառէին, կ՚աշխատէին, կը բուժէին, կը վիրաւորէին, կը տքնէին, կը ճգնէին, կը խրախուսէին, կը խրախուսուէին, կ՚ուրախանային, կը վշտանային, կը սիրուէին, կ՚ատուէին և միշտ իրենց նպատակին կը դիմէին։

Ա՜խ, անցած օրեր, կ՚աղաղակեն նոքա, որոնք իրենց մշակած անդաստանը խոպան կը տեսնեն, իրենց դարմանած բուրաստանը՝ անջուր, իրենց ցանած վարդը՝ թառամած, իրենց շինած տունը՝ փլած, իրենց կառուցած տաճարը՝ անշուք, իրենց խնամած հօտերն՝ անտէր, իրենց ծրագրած օրէնքն ու կանոնն՝ անվաւեր, իրենց յաջորդներն՝ անգործասէր։

Ա՜խ, անցած օրեր, կը հառաչեն նոքա, որոնք իրենց անմեղութիւնը՝ մեղաւորութեան փոխուած կը տեսնեն, իրենց պարզութիւնը՝ չարալութեան, իրենց խղճի անդորրութիւնը՝ խռովութեան, իրենց ազատութիւնը՝ ստրկութեան, իրենց ճշմարտախօսութիւնը՝ ձեւաբանութեան, իրենց բարեպաշտութիւնը՝ փարիսեցիութեան, իրենց վստահութիւնը՝ կասկածոտութեան, իրենց համարձակութիւնը՝ կեղծաւորութեան ու երկչոտութեան, իրենց հանգիստ նինջն՝ անհանգստութեան։

Միով բանիւ, ծերունիէն սկսեալ մինչեւ մանուկը, գահակորոյս Նաբօլէոնէն ու աթոռասահ Պապէն սկսեալ մինչեւ յետին շինականն ու կրօնաւորն, որոց ներկայն անցեալէն անմխիթար է, ամէնքն ևս Անցած օրեր կը հառաչեն։ Ամէն ազգեր, որոնք իրենց նախկին փառքն ու պարծանքն չունին, միշտ Անցած օրեր կ՚աղաղակեն։ Ամէն մարդիկ, որոնք իրենց անցեալ կենաց վայելքն ու կարողութիւնը չունին, միշտ Անցած օրեր կը

digitised by A.R.A.R.@

գոչեն։ Համայն մարդկութիւնը, քանի որ իւր նախկին վիճակի անմեղութիւնն ու երջանկութիւնը չունի, միշտ Անցած օրեր կը հառաչէ։

Կան, կան այն ազգեր և անհատներ եւս, որոնք ՆՈՐ ՕՐԵՐՆ աւելի սիրով կը յիշեն։

Սիրով կը յիշեն նոր օրերն այն ազգերն ու անհատներն, որոնք իրենց վիճակի, իրենց կենաց, իրենց վաստակոց վրայ նոր յաւելուած մի կը տեսնեն և իրենց ներկայն՝ անցեալէն բարեմոյն կը գտնեն։

Տեսէք, թէ ինչպէս կը ժպտին, ինչպէս կը խնդան այն հայրն ու մայրն, որոնք նոր զաւակ մ՚ ունին, հրեշտակի նման սիրուն, աղաւնոյ նման անմեղ, յոյսերով լեցուն, ակնկալութեամբ պարարուն։ Տեսէք, թէ ինչպէս կը գուրգուրան, ինչպէս խնդութեամբ կը վայելեն նոր ժամերն ու վայրկեաններն, և ինչպէս մոռցած են անցած օրերն ու միայն նոր օրերով գրաւուած։

Տեսէք, թէ ինչպէս կը հրճուի նոր օրերուն վրայ այն երկրագործը, որ իւր ցանքը՝ միայն վաթսնաւոր և հարիւրաւոր շահուած կը տեսնէ, իւր քիրտը՝ վարձատրուած, իւր յոյսը՝ պսակուած, իւր հունձը՝ հասած, իւր շտեմարաններն ու ամբարներն՝ լցուած և յագեցած։

Տեսէք, թէ ինչպէս կը ցնծայ նոր օրերուն վրայ այն վաճառականը, որ ծով ու ցամաք չափելէն զկնի, հարիւրաւոր տագնապ ու երկիւղ կրելէն զկնի հաշուետումարներուն և արկղին մէջ կը տեսնէ մեծ արդիւնք, իւր գերդաստանին մէջ՝ առատութիւն, իւր շուրջ՝ բերկրութիւն, իւր սրտին մէջ գոհութիւն։

Տեսէք, թէ ինչպէս կը բերկրին՝ ստրկութենէ ազատուած գերին, չքաւորութենէ զերծուած որբն ու այրին, զաւակներով շրջապատուած պառաւն ու ծերունին, երջանիկ ամուսնութեամբ կապուած՝ երիտասարդն ու երիտասարդուհին, ուսման ընթացքն աւարտած աշակերտն ու աշակերտուհին, զինուորութեան շրջանը լրացուցած զինուորն զուարթագին, պարտքէ ազատուած պարտապանն խնդագին, ծանր հարկը վճարած գաւառացին, հարստահարութենէ ու տառապանքէ ազատ շինականն ու գիւղացին, նոր գառնուկներով և ուլիկներով հօտն ստուարացուցած հովիւն ու հովուուհին։

Ինչպէս նկարագրենք հապա այն ներքին ուրախութիւնը, զոր ունի առաքինին, զոր կը վայելէ իւր պարտքը կատարած քրիստոնեայն ու քաղաքացին, զոր կզգայ ժողովրդեան ու Աստուծոյ սպասաւոր ճշմարիտ եկեղեցական պաշտօնեայն, և որով կը հրճուի ամեն օգտակար անդամ ընկերութեան մարդկային։

Ինչպէս նկարագրենք այն ամեն ազգերու բերկրանքն ու հրճուանքն, որոնք ամեն նոր օրերու հետ կը տեսնեն յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան նորանոր արգասիքներ, մտաւոր և բարոյական զարգացման ճոխութիւնք, արուեստից և գիտութեանց նորանոր արտադրութիւնք, քաղաքաց և շինից պայծառութիւնք, հաղորդակցութեանց դիւրութիւնք, հասարակաց անդորրութիւնք, բերոց և ձեռագործաց շահավաճառութիւնք, իրաւանց ապահովութիւնք, պարտուց կատարմունք, միով բանիւ, բարոյապէս և նիւթապէս բարօրութիւնք։

Այսպէս ահա, ինչտեղ նոր օրերն անցեալէն բարեբաստիկ են, այնտեղ չկան հառաչանքներ անցած օ-

digitised by A.R.A.R.@

րերուն համար, չըկան արտասուք, չըկան սրտաճմլիկ յուշածութիւնք։

Յառաջադէմ ազգերը կը յիշեն անցած օրերն ու ժամանակները, բայց չեն հառաչեր, այլ միայն կը համեմատեն, որ առաջ վայրենի էին, այժմ քաղաքակիրթ են. առաջ ստրուկ էին, այժմ ազատ են. առաջ չարաբաստիկ էին, այժմ բարեբաստիկ են, և այլն և այլն։ Իսկ յետադէմ ազգերն, անցածն կը յիշեն կը համեմատեն և կը հառաչեն։ Նոր օրերուն մէջ՝ հին օրերու յիշատակով կըմխիթարուին, վասն զի իրենց նոր վիճակն անցած վիճակէն տխուր կը գտնեն։ Նոր օրերու մէջ՝ նոր երջանկութիւն չըվայելող ազգերու կեանքն տեւական մի ողբ ու լալիւն է։

Այսպէս չէ՞ արդեօք մեր ազգային վիճակի ճշգրիտ պատկերն։ Միշտ կ'ողբանք անցելոյն վրայ, միշտ կը հառաչենք հին օրերուն համար, միշտ կ'ուլանք, միշտ կ'արտասուենք. այնպէս որ, մեր ազգային ներկայ մատենագրութիւնք մեծ մասամբ ողբ է և լալական եղերանք։

Մենք մեր Խորենացւոյ ժամանակին համար կը հառաչենք. Խորենացին իւրմէն երկար դարերով յառաջ Հայկազեան Թագաւորաց օրերուն համար կը հառաչէ։ Մինչդեռ մենք կը փափաքինք, որ Խորենացւոյ օրերու մէջ ծնուած լինէինք, ընդհակառակն նա կը փափագի և յարտասուս կը փղձկի ասելով. “Ո՛հ, երանի թէ ես Հայկազանց Թագաւորաց ժամանակ ծնուած լինէի և փրկիչն եւս նոյն միջոցին յաշխարհ եկած լինէր և զիս գնած հեթանոսական ծառայութենէ”։

Այսպէս է հայկական կեանքն, անցած օրերն աւելի հրապուրանք ունին՝ քան թէ նորերն, և այս մի ապացոյց է որ մեր նոր օրերն անցածներէն լաւագոյն չեն. Մենք կը խօսինք, կը շարժինք, կը գործենք, կը ժպտինք, կը խնդանք, բայց հին յիշատակներն տակաւին նորերէն քաղցր են։ Վասն զի հին ու նոր կեանքն համեմատելով կորուստ կը տեսնենք՝ քան թէ գիւտ, աղքատութիւն՝ քան թէ ճոխութիւն, անշքութիւն՝ քան թէ փառաւորութիւն, նուաղութիւն ազգայնութեան ամենակերպ տարբերներու՝ քան թէ առաւելութիւն և բարգաւաճանք։ Կարճ ասեմք, մենք ազգովին տակաւին կը հառաչենք — Ո՛հ, անցա՛ծ օրեր։

Արդ՝ այժմ մուտ կը գործենք՝ Նոր Տարւոյն նոր օրերու մէջ, բայց ոչ թէ ազգային նոր և ուրախական կենաց մէջ. Ժամանակի նորոգութեան պատասխան՝ կենաց նորոգութիւնն է. Կենաց նորոգութեան աղբիւրն՝ սրտի և մտքի մշակութիւնն է։ Ինչպէս որ խոպան անդաստաններու մէջ չըկան նոր պտուղներ, նոյնպէս սիրտն ու միտքը խոպան ազգերու մէջ չըկայ կենաց նորոգութիւն, չըկան բարոյական և մտաւոր երեխայրիք, չըկան նոր օրերու և նոր տարիներու մխիթարանք և հրճուանք։

Արդեօք ե՞րբ պիտի գայ հասնի այն ժամանակն, որ Հայք անցելոյն համար չըհառաչեն, այլ ներկայով խնդապէս հրճուին և ցնծան։ Շուտ կը հասնին այս նոր ժամանակն ու նոր օրերն, եթէ Հայք միայն չըխօսին, այլ և գործեն։ Վասն զի գործքով է որ կ'օրհնուին ու կը փառաւորին ազգերն ու անհատներն։ “Գործ քո օրհնեսցեն զքեզ”, այսպէս է անսուտ վճիռն։ Իսկ անգործ շատախօսներու համար չըկայ օրհնութիւն, չըկայ մեծութ̃ի, չըկան նոր կեանք և ՆՈՐ ՕՐԵՐ։

digitised by A.R.A.R.@

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն, տես 12 թիւ, 1871։)

### Միզուք։

Բազում են պատճառք փոփոխելոյ որքանութեան և որակութեան միզին, որով կարի դժուարին է հաստատել զորոշ կանոն ուղղապէս դատելոյ զիւրաքանչիւր տեսակ 'ի նոցանէ։

Անարգել արձակումն միզին ունի զբազում օգուտս առողջութեան, զի վարէ 'ի մարմնոյ զպէսպէս ախտս. վասնորոյ հարկ է ըստ ամենայնի ջանալ պահել զայն արձակ, և յամենայնէ, որ ինչ արգելու զայն, պարտ է ամենայն զգուշութեամբ 'ի բաց կալ։

Ի նստողական կեանս երկոքին եւս, կղկղանք և միզումն, յոյժ պակաս գտանին, ուստի և յառաջ գան պէսպէս հիւանդութիւնք. Ննջելն 'ի փափուկ և ջերմ անկողինս, չոր և ցամաք բնութեամբ կերակուրք, զօրաւոր և ջերմ ըմպելիք, այսինքն օղի, մադերա, պօրտօ, կարմիր գինի և այլն, անկասկած նուազեն զորքանութիւն միզին. և յաւէտ զգուշանալ պարտին այնոքիկ, որք ունին զխիճ կամ զքար յերիկամունս և յերկուորիս։

Պահել զմէզն ընդ երկար՝ կարի վնասակար է. քանզի երկար մնալով 'ի փամփշտի՝ թողու անդ զթանձր և զաղտեղի նիւթս, որ ապա սակաւ առ սակաւ քարանայ. և այս յաւէտ պատահի նստողական արուեստաւորաց և ուսումնասիրող անձանց, զորս բըժշկել դժուարին է։

Եւ որ ստէպ միզէ չափազանց քանակութեամբ է 'ի պատճառս ըմպելոյ յաճախակի, յոյժ թոյլ ջրոյին ըմպելեաց, որպիսի են թէյ, շաքարաջուր, լիմոնաջուր, կամ բազմիցս 'ի կիր առնելոյ զալքարեան աղ և զայլ դրդիչ երիկամանց և հեղեղիչ արեան զնիւթս։ Եւ այս անկարգ դրութիւն միզին նուաղէ զմարմինն և պատճառէ զթոքացաւութիւն. վասնորոյ պարտ է 'ի բաց կալ յամենայն ըմպելեաց, որ ունիցի ըզզօրութիւն գրգելոյ զանցս միզական, և առնուլ պարտ է միշտ զպնդացուցիչ կերակուրս և ըմպելիս, այսինքն կերակուրն իցէ մածուցական դալարիք, բրինձ, սագու, և սալափ եփեալ կաթամբ։ Իսկ ըմպելին իցէ հիւթ բարկ և 'ի տուփոյ պտղոց կամ 'ի դալարեաց։

Նաեւ ըստ չափու կարողութեան անձին առնուլ միշտ զկրթութիւն և ննջել միշտ 'ի վերայ կարծր մահճի. զի փափուկ անկողինն վնասակար է երիկամանց յոյժ։

Ջերմ և չոր օդն և ամենայն քրտնաբեր ինչ յոյժ օգտակար է այսմ հիւանդութեան։

### Քրտունք։

Անզգալի քրտունքն, որ թէ շարունակ թորէ 'ի մարմնոյ, է բարեգոյն քան զայլ արձակմունս կղկղանաց մարմնոյ, որ և է յոյժ օգտակար առողջութեան։ Քանզի սակաւ հիւանդութիւնք կամ վնասակար ախտք երեւին 'ի մեզ, յորժամ այս թորումն մարմնոյ ընթանայ ըստ պատշաճի. բայց եթէ պատճառաւ իւիք արգելեալ լինիցի այն, կազմուած մեր փութով անկանիցի ընդ անկարգութեամբ։

Բայց զի որովհետեւ այս բազմաշահ արձակումն քրտանց մարմնոյ չէ այնպէս զգալի, որպէս զայլ արձակմունս,

digitised by A.R.A.R.@

վասն որոյ և ոչ ըստ արժանւոյն խնամարկի՝ կամ բնաւ ընդ մտադրութեամբ անկանի, յորմէ և առանց զգալոյ յառաջ գան ջերմն, հարբուխ, հազ, տենդ, յօդացաւութիւն և այլ հիւանդութիւնք։

Յաղագս այսորիկ փոխանակ մանրակրկիտ քննելոյ զբնութիւն քըրտանց, զնորին զանազանութիւն 'ի զանազան եղանակի, կլիմայի և 'ի կազմուած մարդոյ, և այլն, ջանասցուք յառաջ բերել զպատճառսն, յորոց արգելեալ լինի այն, և անդէն ցուցցուք, թէ զիա՞րդ և որո՞վ պարտ է ըստ ժամանակին զգուշանալ յիւրաքանչիւրոց ներգործութեանց. որք են փոփոխութիւն եղանակի, թացեալ հանդերձք, թացեալ ոտք, գիշերային օդ, փոփոխութիւն ցուրտ եղանակի 'ի ջերմ եղանակ, կամ ներհակ սորին, զորոց խօսեսցուք կարգաւ։

### Փոփոխութիւն եղանակի։

Այն 'ի գլխաւոր պատճառաց արգելլոյ զքրտունս կամ ըմբռնելոյ 'ի հարբուխ, 'ի հազ, 'ի փողացաւութիւն, 'ի ջերմ և 'ի սառնութիւն, է փոփոխութիւն եղանակի։ Քանզի ցրտութիւն կամ ջերմութիւն, թացութիւն կամ չորութիւն, ոչ միայն են կարի զանազան 'ի զանազան եղանակի, այլ և բազում անգամ փոխին 'ի միոյ սաստիկ եղանակէ առ միւսն 'ի սակաւ աւուրս, նաև երբեմն 'ի միում աւուր, որ յանպատրաստից վնասէ առ ժամայն. վասն որոյ բարեգոյն եղանակ 'ի բարեխառնել զմարմինն՝ առ 'ի կարող լինել տանել փոփոխութեան եղանակի, է յամենայն աւուր ելանել արտաքոյ տան, և առնուլ զկրթութիւն 'ի բաց օդի, ըստ չափու կարողութեան մարմնոյ։

### Թացեալ հանդերձք։

Ոչ միայն սառնութիւն թացեալ հանդերձից արգելու զքրտունս, այլ և մարմինն ըմբռնեալ 'ի խստութիւն կամ ծծեալ զխոնաւութիւն զգեստուցն՝ անկանի 'ի վտանգ մեծ, այսինքն 'ի սաստիկ ջերմն, 'ի յօդացաւութիւն և յայլ մահաբեր հիւանդութիւնս։ Յայսմ վտանգաւոր դիպուածոյ չէ ոք ազատ, ոչ պատանիք և ոչ կորովիք և քաջառողջ անձինք. վասն որոյ հարկ է ամենեցուն զգուշանալ յայսմ վտանգաւոր դիպուածոյ։

Բայց դժուարին է այս զգուշութիւն այնոցիկ, որոց գործ և զբաղմունք են արտաքոյ տան, և ինքեանք պարտաւոր են միշտ ելանել 'ի տանէ. սակայն եթէ փոյթ տարցին, հնար է նոցա զգէմ ունիլ վտանգացն, այսինքն՝ եթէ ոչ կարիցեն առ ժամայն փոխել զթացեալ զգեստն, հնար է նոցա տալ զինքեանս պէսպէս շարժողութեան մինչև ցամաքեսցին զգեստք և մարմինն գտցէ զիւր առաջին նորոգութիւն։

### Թացութիւն ոտից։

Թացութիւն ոտից բազում անգամ պատճառէ զպէսպէս սաստիկ հիւանդութիւնս, այսինքն ցաւ որովայնի, բորբոքումն լանջաց և աղեաց, խիթ աղեաց, ոռնառութիւն, քըլերայ և այլն։

Թէ և, որ սովոր է այսմ, ոչ այնչափ վնաս կրէ, բայց և հարկ է զգուշանալ յատկապէս նոցա, որք են փափկասուն և տկարամարմին, որոց վնասէ կարի փութով։ Ոչ է ազատ 'ի վնասուց և որ բոկ ոտիւք շրջի 'ի վերայ խոնաւ գետնոյ յատկապէս յըղի կին։

digitised by A.R.A.R.@

## Գիշերային օդ :

Բրտունքն բազում անգամ արգելեալ լինի 'ի գիշերային օդոյ . յատկապէս յամառան եղանակի , յորմէ զգուշանալ պարտ է յոյժ . 'ի մթանալ ջերմագոյն աւուրց աւաստ իջանեն ցօղք և վտանգաւոր առնեն ըզգիշերային օդն : Եւ այս 'ի ջերմակայրս առաւել վտանգաւոր է քան 'ի բարեխառն կլիմայս :

Այս ցանկալի է ամենեցուն յոյժ, զինի ջերմ աւուր յերեկոյեան փոքրր մի զովացուցանել զինքն շրջելով արտաքոյ տան 'ի բաց օդի . բայց ովոք ցանկայ առողջութեան իւրոյ , բարւոք է 'ի բաց կալ յայսմ բերկրալի վայելչութենէ . կամ եթէ չկարէ , մի ելցէ առանց վերարկուի և ծածկեալ ունելով զգլուխն յատկապէս 'ի լրալուսնի :

Յայտ է , զի ներգործութիւն երեկոյեան ցօղոյ չէ այնչափ զգալի , բայց և ոչ է աներկիւղ 'ի վնասուց , վասնորոյ եթէ ճանապարհորդք , եթէ մշակք և բեռնակիրք և եթէ այլ ծանըր աշխատաւորք , որք զջերմութիւն աւուրն բարձին տքնութեամբ , պարտին զգուշանալ յոյժ 'ի գիշերային ցօղոյ , որովհետեւ այսպիսիք առաւել քրտնին և մեծ եւս է վտանգ նոցա :

Եւ այս վտանգաւոր է յոյժ 'ի տեղիսն , ուր գետինն տափարակ է և ճախինային, և ուր են ագարակք որիզոյ և ցանկ պէսպէս գալարեաց . զի արտաշնչութիւն գոլորշեաց միացեալ ընդ օդոյ՝ վնասէ բնակչացն պէսպէս ախտիւք և վտանգաւոր հիւանդութեամբ :

Եւ այս զգուշութիւն պարտ է ունիլ և վասն խոնաւուտ տան , սենեկի , անկողնոյ և բնակարանի , ուր հանապազ նստին կամ գործեն :

## Փոփոխումն ջերմ եղանակի առ ցուրտ , և 'ի ցրտոյ առ ջերմ եղանակ :

Զայսմանէ արդէն խօսեցեալ եմք ուրեք ուրեք 'ի նախընթաց գլուխս և ցուցեալ եւս զվտանգսն , յորոց ծագիլ ունին , ընդ նմին և զմիջոցսն , առ 'ի զգուշանալ յայնց , զորոց կրկին խօսիլ աստ անդէպ համարիմ : Միայն յաւարտ բանիս աւանդեմ ամենեցուն զայս պատուական խրատ , ասացեալ ուրումն ներհուն բժշկի վասն պահպանելոյ զառողջութիւն . «Մարդ , ասէ նա , որ վայելէ զբարեբաստիկ ողջութիւն , չէ պարտ միանգամայն հաստատել զինքն առ յատկացեալ կանոն ինչ կեցութեան , այլ պարտ է նմա ստէպ փոխել զայն , այսինքն երբեմն անցուցանել 'ի քաղաքի և երբեմն 'ի գիւղս , երբեմն 'ի յորս և 'ի զբօսանս, երբեմն 'ի ճանապարհորդութեան ծովու և ցամաքի , երբեմն տալ զինքն 'ի տքնութիւն և երբեմն 'ի հանգիստ , բայց առաւելապէս յանձնամարդ կրթութիւն :

Չէ պարտ նմա մերժել զոեսակս կերակրոց , զորս հասարակութիւնն 'ի կիր առնու , և ոչ փոյթ տանիլ՝ եթէ երբեմն շատ կերիցէ և երբեմն սակաւ , երբեմն ընդունիլ պարտ է զք 'ի հացկերոյթ և երբեմն խորշիլ 'ի նմանէ : Լաւ է նմա յաւուրն երկիցս ճաշել քան միանգամ և եթ , զոր ինչ կարէ դիւրեաւ մարսել՝ կերիցէ 'ի սրտէ և ախորժանօք . զի զգուշանօք ուտել ինչ , կամ կարծիք անառողջ կերակրոց՝ անկասկած վնասէ : Չէ պարտ նմա սատիկ տենչանօք զհետ լինել իգական սեռին և ոչ միանգամայն հրաժարիլ 'ի հաղորդութենէ նոցին :

Հուսկ ամենայնի պարտ է կանխաւ ամենայն խոհականութեամբ

digitised by A.R.A.R.@

մնացիր լինիլ բարւոք և վայելուչ կեցութեան, 'ի բաց կալով յամենայն չափազանցութենէ, որով մնասցէ առողջութիւնն անեղծ և անապական և կարողութիւն կազմուածոյն յաւուր հիւանդութեան՝ նմա օգնական »:

## ԴԺՈՒԱՐԱԲՈՅԺ ԵՒ ԱՆԲԺՇԿԵԼԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Թէ և 'ի նախընթաց գործ մեր, 'ի կարգադրութիւնս առողջութեան, 'ի զանազան գլուխս ծանուցեալ եղեն պատճառք պէսպէս հիւանդութեանց և միջոցք զգուշանալոյ յայնց, սակայն անհնար է, եթէ ամենայն ոք 'ի բոլոր կեանս իւր կարիցէ հսկել ընդդէմ այնց ամենից վտանգաւոր պատճառաց 'ի պահպանել զառողջութիւն իւր: Վասն որոյ հարկաւոր համարիմ յաւելուլ ընդ այնս քանի մի դժուարաբոյժ և անբժշկելի հիւանդութիւնս, որք են.

Ծիւրական ախտ.

Բորբոք ստամոքսաց և փորոտեաց.

Կոլերա մորբիւս.

Կարօտութիւն ախորժակի.

Ախտ թանչից կամ որովայնալուծութեան.

Խիճ կամ քար յերիկամունս և յերկուորիս.

Արիւնալուծութիւն որովայնի.

Գլխացաւութիւն.

Աչացաւութիւն.

Շնչարգելութիւն.

Կաթուած կամ անդամադօսութի.

Ջղային տկարութիւնք.

Ջրգողութիւն.

Դեղնութիւն.

Յօդացաւութիւն.

Եւ ընդհանուր ծանօթութիւն վասն ջերմախտութեանց հանդերձ ցուցանելով զորպիսութիւն իւրաքանչիւր հիւանդութեան, զպատճառն, զնշան հիւանդութեան, զզգուշութիւն և զմիջոցն կամ զդեղ դիւրելոյ կամ բժշկելոյ հիւանդութե, յուսալով զի որք ցանկան առողջութեան իւրեանց, նախ՝ փոյթ տարցին տալ միշտ քաջ գիտողութեան իւրեանց զայս գոյն վտանգ մեր, և զգուշանալ 'ի պատճառացն առ 'ի ազատ մնալ յայնց ախտից: Եւ երկրորդ՝ եթէ, Տէր մի արասցէ, մի և միւս եղանակաւ ըմբռնեսցի ոք յայնս, ունիցի 'ի ձեռն պատրաստ զկարգադրութիւնսն նշանակեալ 'ի նմին վարելոյ զկեանս առ 'ի դիւրութիւն կամ 'ի բժշկութիւն հիւանդութեան:

## ԳԼՈՒԽ Ա.

### Ծիւրական ախտ.

Այս անուանելի ցաւ հիւծէ եւ մաշէ զբոլոր մարմինն, պատճառեալ 'ի կեղելից պալարաց կամ 'ի վիրաց թոքոյ, զոր անհնար է բժշկել:

### Պատճառք.

Այս ախտ յառաջ գայ 'ի հարբուխային բորբոքմանէ լանջաց, յապականեալ վարուց, 'ի քասէ կամ 'ի բորոյ, 'ի շնչարգելութենէ, 'ի յետս դարձմանէ պիսակի կամ ծաղկի, 'ի գաղղիական ախտէ, և այլն: Նա և պատճառի այն յանառողջ օդոյ, 'ի սաստիկ բարկութենէ, յանհնարին թաղծութենէ մտաց, 'ի կարի պարապմանէ խորաքննին և նորահնար արուեստից կամ գիտութեան, 'ի յանկարծակի դադարմանէ սովորական արտաթորման, այսինքն՝ արեան թըթից, տեղատեսութեան, քթի, թա-

digitised by A.R.A.R.@

բախոյ վերայ մարթոյ և այն ։

Նոյս և յանկարծակի փոխադրելոյ 'ի ջերմ կլիմայէ առ ցուրտն, 'ի փոխելոյ զջերմարար զգեստս առ նուրբ և օդանցուն և կամ առ այլ ինչ, որ արգելու զարտաշնչութիւն մարմնոյ ։

Դարձեալ ուժգին երգեցողք, և որք պատճառեն զսաստիկ ճիչումն թոքոյ, բազում անգամ են ընդունակ սոյն ախտի ։

Նոյս և 'ի զեղխութենէ, 'ի գիշերի յերկար արթնութենէ, 'ի յըմպելոյ անչափ ջերմ և զօրաւոր հեղուկաց, 'ի նստողական կենաց, որոց կորացմամբ նստելով թոքոյն, պատճառի այս ախտ, նաև 'ի ցրտութենէ, 'ի թացեալ ոտից կամ 'ի զգեստուց, 'ի խոնաւ անկողնոյ, յըմբռնմանէ ցրտութեան զկնի յոյժ ջերմ լինելոյ մարմնոյն, 'ի կծու աղեալ և համեմեալ միսական կերակրոց և յայնց՝ յորոց պատճառի սաստիկ բորբոք արեան ։

## Նշանք սոյն հիւանդութեան ։

Այս հիւանդութիւն հասարակապէս սկսանի չոր հազիւ, որ գրեթէ տևէ ամիս ինչ ։ Ախտացեալն զգայ առաւել քան զսովորականն՝ ջերմութիւն և զցաւ 'ի կուրծս, առաւել ևս յորժամ առնէ զշարժողութիւն ինչ ։

Թուք նորա լինի աղահամ և երբեմն խառն ընդ արեան, ճաշակ նորա միշտ անախորժ և ծարաւ նորա սաստիկ, զարկ բազկոյն երբեմն երագ, երբեմն թոյլ և երբեմն լի և խիտ ։ Այսպիսի են նշանք 'ի սկիզբն այսր հիւանդութեան ։ Յետ որոյ հիւանդն սկսանի թքանել կանաչախառըն, սպիտակ կամ արիւնախառն թարախս և մարմինն նուաղի 'ի ծիւրական տենդէ կամ 'ի հաշուղական բըրտանց, որք շարունակ տևեն գիշեր և ցերեկ, մին ընդ երեկս և միւսն ընդ առաւօտն ։ Լուծումն որովայնի և արձակումն մազին բազում անգամ դժուարաւ կատարին, որով և հիւանդն նուաղի յոյժ ։

Ոտունք ձեռացն նշանաւոր ևս փոքրկանան, եղնգունք կորաթեքին առ վայր, և հեր գլխոյն սկսանի թափիլ ։

Նայց յորժամ ոտքն և ձեռքն սկըսանին ուռիլ, թափի ամենայն զօրութիւն մարմնոյ նորա, 'ի խոր անկանին աչունք նորա, և ըմբռնի նա 'ի սաստիկ ցրտութիւն, ահա մերձեալ է մահ նորա ։

## Օգնութիւն ։

Ի յերևիլ նշանաց այսր հիւանդութեան, եթէ հիւանդն բնակի 'ի բազմամբոխ քաղաքի, կամ յայնպիսի տեղւոջ, ուր շնչումն օդոյ չէ ազատ, հարկ է նմա առ ժամայն փոխել ըզբնակութիւն իւր առ տեղի ինչ արտաքոյ քաղաքի, ուր օդն չինչի ազատ և է բարեխառն և առողջարար, և յամենայն առաւօտու պարտ է առնուլ անդ զկրթութիւն, որչափ և կարող իցէ, որոյ բարեգոյնն է հեծանել 'ի ձի. և եթէ զայս չկարէ առնել, ձեմեսցէ ոտիւք կամ երթիցէ կառօք և շրջեսցէ փոքր մի հեռագոյն ։

Երկար ճանապարհորդութիւն ծովու կամ ցամաքի է կարի բարեյաջող միջոց առողջութեան այսր հիւանդութեան. զի փոփոխութիւն զանազան տեղեաց և առարկայից և տեսարան բնութեան զբաղեցելով զմիտս նորա, մեծ զուարթութիւն տացէ վհատեալ մտացն և յոքնեալ ոգւոյն. միայն պարտ է ամենայն արթնութեամբ զգուշանալ յըմբռնմանէ ցրտոյ, 'ի թացեալ





digitised by A.R.A.R.@

զգեստուց, 'ի խոնաւուտ անկողնոյ և 'ի գիշերային օդոյ և այլն ։

Զոր տեսակ կրթութեանց և իցէ, պարտ է առնել զայն յառաւօտու և ընդ երեկս, յորժամ ստամոքս նորա դատարկ է. զի յայլ ժամ աւուրն վնասակար է ։ Նոյնպէս հիւանդ եթէ ոչ իշխեսցէ առնուլ երկար ճանապարհորդութիւն, կարէ երթալ 'ի բարեխառն տեղի ինչ, ուր ոչ կարի ջերմ իցէ և ոչ կարի ցուրտ, և մնասցէ անդ մինչև գտցէ զկատարեալ առողջութիւն ։ Արդ զկնի նշանակելոյ զպատշաճ զգուշութիւն օդոյ և կրթութեան, հարկ է և ըստ արժանւոյն առաջի առնել զդիտողութիւն կերակրոց և ըմպելեաց սոյն հիւանդի ։

Այս հիւանդին չէ պարտ ուտել բնաւ զայնպիսի ինչ, որ իցէ ջերմաբնոյթ և դժուարամարս, և ըմպելիք նորա պարտ է լինել մեղմ և զովարար բնութեամբ ։ Զի ամենայն կերակուր, զոր այս հիւանդ ուտէ, պարտ է ունել զզօրութիւն փոքրելոյ զկծուութիւն հեղուկաց մարմնոյ, բայց և սննդարար իցէ և զօրացուցիչ հիւանդին, յորոց օգտակարագոյնքն են բանջարեղէն և կաթն, կամ լոկ կաթն որ է առաւել առողջ և սննդարար քան զամենայն կերակուրս ։

Յոյժ օգտաւէտ է այս հիւանդութեան կաթն իշոյ, յաւուրն երիցըս կամ չորիցս անգամ ըմպելով, և յիւրաքանչիւր նուագ իբրև զչափ քառորդ սրուակի, ընդ կոտր մի հացի. բայց եթէ ոչ գտցի կաթն իշոյ, կամ չիցէ այն հիւանդին հաճոյ ըմպել, բարեգոյն է առնուլ անեփ կաթըն կովու, և այս ըստ որում առաւել ծանր է կամ դժուարամարս, պարտ է առնուլ զայն աստիճանաւ, այսինքն 'ի փոքրէ սկսեալ առ չափաւորն, կամ խառնեսցէ 'ի նա հաւասարաչափ ջուր եփեալ գարւոյ ։

Որիզ կամ գարի եփեալ կաթամբ, հասունացեալ պտուղք, խորովեալ կամ կաթամբ եփեալ, բանջարեղէնք հաստապտղոյ, փորդի, շերի, կեռասի և այլն, են կարի պատշաճ կերակուր սոյն հիւանդին ։

Առողջ օդ, պատշաճ կրթութիւն և յարմար կերակուր կայացեալ գլխաւորապէս 'ի մեղմացուցիչ դալարիս և 'ի կաթն, բազում անգամ ողջացուցանեն զայս հիւանդութիւն 'ի նորոգ սկսանելն. բայց յորժամ երկարեալ է այն և յանփութութենէ ծանրացեալ, ամենայն ինչ անօգուտ է ։ Հարկ է և պահել զմիտս սոյն հիւանդին խաղաղ և ուրախ. քանզի այս հիւանդութիւն բազում անգամ պատճառի 'ի սաստիկ թախծութենէ մտաց, վասնորոյ նուագ, երգ, ուրախ միաբանութիւն և այլ զուարճալի զբօսանք մեծ օգուտ ընծայեն այսմ հիւանդութեան։ Նա չէ պարտ թողուլ զայս հիւանդ միայնակ, զի տարակուսեալ նորա ընդ արտմալի դրութիւն իւր, վատթարագոյն առնէ զցաւն ։

Նոյնպէս և պարտ է հիւանդին զգուշանալ 'ի բարկութենէ եւ 'ի բորբոքմանէ վաղվաղշտական ախտից, որք առաւել քան զթոյն մահարար ունին ներգործութիւն 'ի վերայ սոյն հիւանդութեան ։

Իսկ զի, որովհետեւ այս հիւանդ 'ի սկիզբն վշտանայ 'ի սաստիկ չոր հազէ, բարւոք է պատրաստել զդիւրաբար խառնուրդս միաչափ հիւթոյ լեմնի, մեղր և օշարակի մեկոնի. յիւրաքանչիւրոց չորս ոնս (ունկի) առեալ 'ի մաքուր աման ինչ և եդեալ 'ի վերայ մեղմ հրոյ եփեսցի մինչև 'ի թանձրանալն. և ապա 'ի կիր առցէ զայն

digitised by A.R.A.R.@

յորժամ՝ սկսանիցի հաղալ, յիւրաքանչիւր նուագ մեծ գրգալ մի ։

Նոյնպէս օշարակ նշոյ, ծաղկի նարնջենոյ և կապալլէր, որք են յոյժ օգուտ հազի և կազդուրիչ կրծոց, յորոց առցէ հիւանդն զայն, որ առաւել հաճոյ իցէ ըմպել կամ օգուտ ընծայեսցէ նմբեան ։

(Շարունակելին։)

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ ազգային պարբերական թերթերէն կը տեսնենք, որ Կրօնական Ժողովոյ Ընտրութիւնը ջերմ վիճաբանութեան տեղի տուած է Ազգային Երեսփոխանական Ժողովին մէջ։ Թէ՛ ո՞ւր եղերած է մինչև ցարդ վիճաբանութեան արդիւնքն. ընտրուա՞ծ է արդեօք Կրօնական Ժողովն. և ինչ եղանակաւ, այս մասին վախճանական լուր չունինք տակաւին։ Բայց խնդրոյն կարեւորութիւնը կը ստիպէ ըզմեզ հրապարակաւ յայտնել մեր համոզումն, եթէ ոչ Երեսփոխանական Ժողովն ներկայ վիճաբանութեանը հացնելու (որ գուցէ արդէն լուծուած է), գէթ ապագային մէջ նըկատողութեան և խելամտութեան առատ նիւթ մատակարարելու համար։ Եւ այս աւելի համապատասխան է մեր բուն նպատակին, որ է ճշմարտութեանը միայն պատկանիլ և ոչ այս ինչ կամ այն ինչ կուսակցութեան։

Մեր Ազգային Սահմանադրութիւնը Կրօնական Ժողով մի կը ներկայացնէ մեզ, անդամոց քանակութիւնը և պարտուց սահմանը համառօտիւ գծելով։ Բայց թէ համապատշա՞ճ է արդեօք այն Կրօնական Ժողովի կազմութիւնն մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչական ոգւոյն, և ազգային է արդեօք իւր ծնունդն, թէ օտարոտի. այս պարագաները մի առ մի պարզելու համար, հարկ է նախ մեր Եկեղեցւոյ վարչական սկզբունքի յատուկ նկարագիրը գիտել և ապա նոյն նկարագրով ամէն բան քննել և դատել։

Ընդհանրապէս խօսելով, ամէն քրիստոնեայ ազգաց եկեղեցիներ, ոչ այնքան վարդապետութեամբ, որչափ վարչական սկզբունքով կը տարբերին։ Եւ վարչական սկզբունքը խիստ և խիստ մեծ նշանակութիւն ունի որ և իցէ եկեղեցւոյ քրիստոնէական յառաջադիմութեան կամ յետադիմութեան նկատմամբ. վասն զի, ինչպէս քաղաքական, նոյնպէս և եկեղեցական վարչութեան եղանակներն մեծ ազդեցութիւն ունին ժողովրդոց լուսաւորութեան, բարօրութեան և վարուց ու բարուց վրայ։ Տիեզերական պատմութեան մէջ կը տեսնենք արդէն՝ թէ ինչ յեղյեղուկ վիճակի մէջ կը ներկայանան մեզ քաղաքական վարչութեանց եղանակներն, մերթ նահապետական, մերթ բռնապետական, մերթ անկախ, մերթ սահմանեալ միապետական, մերթ հասարակապետական, այլովքն հանդերձ. և թէ քանի՜ քանի՜ յուզմունքներ և յեղաշրջումներ պատճառած են և կը պատճառեն ընկերական աշխարհի զանազան դասակարգերուն մէջ։ Սակայն այս ամէն գըրութեանց և յեղափոխութեանց մէջ ընդհանուր միտում մի կը նշմարուի անհերքելի, որով բացառիկ արտօնութիւններն օր աւուր կը վերնան և ժողովրդական վեհապետութեան տարրը նշանակութիւն կը ստանայ թէ՛ պատմութեան, թէ՛ օրէնսդրութեանց և թէ՛ վարչական եղանակներու մէջ։

digitised by A.R.A.R.@

Այս երեւոյթն, որ քաղաքական աշխարհի հորիզոնին վրայ կ'երեւութանայ մեզ, եթէ քաջ դիտենք, նոյնը կը տեսնենք նաեւ կրօնական աշխարհի հորիզոնին վրայ։ Ու անհնարին է որ այնպէս չըլլի, անհնարին է որ, եթէ ոչ աւելի, գէթ քաղաքականին չափ կրօնական վարչութեան եղանակին եւս ժողովրդոց ուշադրութիւնն չըգրաւէ, վասն զի երկուքն եւս, ինչպէս ասացինք, մեծ նշանակութիւն ունին ընկերական կենաց նկատմամբ։

Ամէն ազգեր կը պախարակեն այսօր Պապական վարչութեան դրութիւնը եւ նոյն իսկ Կաթոլիկութեան ծոցին մէջ սնուած աստուածաբաններն, ինչպէս են Տէօլինկեր եւ այլք, ամենէն բարձրաբարբառ բողոքարկուներն են նոյն վարչութեան դէմ, որ ոչ միայն ժողովրդի միջամտութիւնն եկեղեցական գործոց մէջ բացէ'ի բաց կը մերժէ, այլ եւ եկեղեցական մարմնոյն անսխալականութիւն վերագրելով՝ անպայման իշխան եւ անպայման օրէնսդիր կը կացուցանէ հասարակաց խղճի վրայ։ Ո՞վ կարող է այս անհեթեթ վարչական դրութիւնը համաձայնեցնել Քրիստոնէական նախկին Եկեղեցւոյ վարչական սկզբունքին հետ, եւ ո՞վ կարող է երաշխաւորել՝ թէ երկար պիտի տեւէ այն օրինակ կղերական ազնուապետութիւնը, որ բոլորովին հակառակ է քրիստոնէական Եկեղեցւոյ ազատութեան եւ Աւետարանի քարոզած եղբայրութեանն ու հաւասարութեան։

Պապական վարչութեան դրութիւնը դատապարտելով՝ մենք ջատագով չենք նաեւ բողոքականութեան քանի մի ճիւղերուն մէջ ընդունուած վարչական (չասենք անիշխանական) դրութեանը, ուր չկայ յատուկ եկեղեցական պաշտօնէութիւն, չկան յատկապէս նոյն պաշտօնին նուիրուած անձինք, այլ իւրաքանչիւր անդամ եկեղեցւոյ՝ Պապ մ'է, Աստուածաշունչն ձեռքին։ Այս դրութիւն եւս հակառակ է Քրիստոնէական նախկին Եկեղեցւոյ վարչութեան հոգւոյն, վասն զի Քրիստոնէական ճշմարիտ Եկեղեցին ոչ միայն անիշխանութիւն չէ, այլ ընդհակառակն՝ հզօր սկզբունքով հզօր վարչութիւն, որուն մէջ ամփոփուած է իւր ազատութիւնը, իւր կոչման տեւականութիւնը, իւր նպատակի յառաջադիմութիւնը եւ իւր մեծ գործը երկրիս վրայ։

Ի՞նչ է այս վարչական հզօր սկզբունքն եւ ո՞ւր որոնելու է արդեօք։ Որո՞ւն յանձնելու է Եկեղեցւոյ վարչութիւնը, որպէս զի ապահով լինի եւ անվտանգ։ Արդեօք քաղաքական իշխանութեա՞ն։ — Ոչ երբեք, վասն զի ծանր է Եկեղեցւոյն կապել քաղաքական կառավարութեան հետ եւ իւր խիղճը ծախել. վասն զի Եկեղեցին ինքն բարձր պարտաւորութիւններ ունի կատարելու եւ իւր փեսան երկինքն է. ուստի եթէ ծախուի քաղաքական իշխանութեան, իւր փեսային դէմ անհաւատարմութեամբ մեղանչած կը լինի, ինչպէս են ամեն եկեղեցիներ, որոց իշխողն քաղաքական կառավարութիւնն է. Արդեօք Եկեղեցւոյ վարչութիւնը յանձնելու է միայն եկեղեցականա՞ց։ — Ո՛չ երբեք, վասն զի եկեղեցականութիւնն Եկեղեցիէն, այսինքն ժողովրդեն բաժանել եւ առանձին իշխող մարմին կազմել, կը նշանակէ Եկեղեցին եւ եկեղեցականութիւնը, կամ (ըստ պապական արտաբերութեան) ժողովուրդն ու կղերը անհաշտ ատելութեան մէջ դնել, ինչպէս ակներեւ կը տեսնենք Պապական

digitised by A.R.A.R.@

վարչութեան մէջ։ Որուն յանձնուած է ուրեմն Եկեղեցւոյ վարչութիւնը․ Արդեօք քաղաքական կառավարութեան և եկեղեցականաց միանգամայն։ — Ո՛չ երբեք, վասն զի անհընարին է այս ձեւ վարչութիւնը։ Վասն զի քաղաքականութիւնն ու եկեղեցականութիւնն ունին իւրաքանչիւրն իրենց յատուկ հեղինակութիւնն ու ստորոգելիքն, և իշխանութիւնն չը բաժնուիր, որ կէս վարչութիւն քաղաքականէն ենթադրենք և կէս վարչութիւն եկեղեցականէն։ Ուստի և կատարեալ ցնորք է այն օրինակ հակառակատարր բաղադրութեամբ վարչութիւն երեւակայել։ Այո՛, քաղաքականութիւնն և եկեղեցականութիւնը կը կառավարեն եկեղեցին, բայց ոչ թէ միասին, այլ փոփոխակի, որով և միշտ խառնակութիւն և անհաշտութիւն կը տիրեն երկու իշխանութեանց մէջ։

Մենք ազգային քաղաքականութիւն չունինք, բայց այն հարցուպատասխանները յառաջ կը բերենք, որպէս զի Եկեղեցւոյ վարչական սկզբունքին նկատմամբ անորոշ և անբացայայտ կէտ չը թողունք, և մեր համոզումն մեկին և լուսաւոր կերպիւ ներկայացնենք հասարակաց դատողութեան։ Որուն յանձնուած է ուրեմն եկեղեցական վարչութիւնը։ — Եկեղեցական վարչութիւնը յանձնուած է՝ ո՛չ քաղաքական իշխանութեան, ո՛չ լոկ եկեղեցականաց և ոչ երկուսին միանգամայն, այլ յանձնուած է եկեղեցականին և ժողովրդին՝ ՀՈՎՈՒԻՆ և ՀՕՏԻՆ։ Այս է ամենէն ընտիր և յարմար միջոցն եկեղեցական վարչութեան, թէ՛ քաղաքական իշխանութիւն ունեցող և թէ՛ չունեցող քրիստոնեայ ազգաց համար։ Այս եղանակաւ միայն եկեղեցական վարչութիւնը հզօր կը լինի և երբեք ընդհարումներ չեն պատահիր քաղաքականութեան և եկեղեցականութեան մէջ, որով և կ՚անհետին ամեն աղէտալի հետեւանքներ։ Վասն զի, ժողովուրդն, որ քաղաքականութեան պատուանդանն է, լինելով նաեւ շաղախ եկեղեցական վարչութեան շինուածքին, միշտ ակնածելի և զօրաւոր կը կացուցանէ Եկեղեցին Տէրութեան առջեւ, որ իւր շահուց համար կը պարտաւորի անշուշտ՝ ոչ միայն Եկեղեցւոյ շահուն չը դպչիլ, այլ ընդ հակառակն պաշտպանել զայն և յարգել։ Այս վարչական եղանակաւ ոչ տէրութիւնն երկիւղ կ՚ունենայ Եկեղեցիէն և ո՛չ Եկեղեցին Տէրութենէն։ Այս վարչական ձեւն, այսինքն ժողովրդականաց միջամտութիւնն եկեղեցական գործոց մէջ, այնքան շահաւէտ է և յարմար, որ ամէն մարդիկ ճշմարտութենէ կստիպուին նոյնը խոստովանիլ և ընդունիլ․ վասն զի յայտնի է, որ Եկեղեցին ժողովրդականքն են և Քրիստոնէական Եկեղեցւոյ արշալուսին ժամանակ ամենեւին չէինք տեսներ եկեղեցականի և աշխարհականի բաժանումներ, որովհետեւ ՚ի սկզբան Քրիստոնէական Ընկերութիւնն համագործութեան և միջման հիման վրայ միայն կը յառաջէր։

Արդ՝ ՚ի պարծանս Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ հրապարակաւ կը հռչակենք ահա՛, որ մեր Եկեղեցին, իբրև հաւատարիմ աւանդապահ Քրիստոնէական նախկին Եկեղեցւոյ վարչական սկզբունքին, իւր կառավարութեան մէջ երբեք եկեղեցականաց և աշխարհականաց խտրութիւններ մտած չէ, այլ ամեն ժամանակ եկեղեցականք և ժողովրդի երեսփոխանք միասին գործած են։ Թողունք դարուց ՚ի դարս պատմութեան մէջ յիշուած

digitised by A.R.A.R.@

եկեղեցականներէ և աշխարհականներէ միասին գումարուած ժողովներն, որոնք կատարուած են կամ կաթողիկոսաց ընտրութեան համար, կամ եկեղեցւոյ բարեկարգութեան համար, կամ արտաքին թշնամիներու պահանջումներուն պատասխանելու համար, կամ հերձուածներ և աղանդներ մերժելու համար, կամ որ և իցէ ազգային իրողութեան համար. Թողունք անցեալն, և մեր խորազնին նայուածքը դարձնենք միայն ներկային վրայ։ Հայաստանեայց Եկեղեցւոյ ժողովուրդն, ուր որ նկատենք, թէ իւր բնիկ Հայրենեաց մէջ, և թէ տարագիր պանդխտութեան, ամէն տեղ անարատ պահպանած է եկեղեցական վարչութեան կամ տեսչութեան սկզբունք մի, որ իւր առաքելական սքանչելի աւանդներէն մին է։ Ամէն տեղ ուր որ եկեղեցի ունի Հայը, նոյն եկեղեցւոյն մէջ ունի անշուշտ ինչպէս եկեղեցական պաշտօնեայք, նոյնպէս և ժողովրդէն ընտրուած եկեղեցպաններ, երեսփոխաններ կամ Թաղականներ, որոնք, թէ եկեղեցական և թէ աշխարհական, իրարու հետ աջակցելով, նոյն եկեղեցւոյն կամ Թաղին պէտքերը կը տնօրինեն։ Ո՞չ ապաքէն սոյն այս հանրաշահ սկզբունքի աւանդապահութեան և հաստատութեան գեղեցիկ տիպար է նոյն իսկ Երեսփոխանական Ժողովն իւր եկեղեցական և աշխարհական աջակից անդամներով։

Արդ՝ խնդիր է այսօր Երեսփոխանական Ժողովին մէջ՝ թէ Կրօնական Ժողովն լոկ եկեղեցականներէ՞ պիտի բաղկացած լինի, թէ նաև աշխարհականներէ։ Մենք կը սիրենք հաւատալ, որ սոյն օրինակ խնդիր մի երբէք պիտի չը յուզուէր Հայաստանեայց Եկեղեցւոյ գաւառներուն մէջ, եթէ Պաղամէնիան լոկ եկեղեցականներէ կազմուած Էջմիածնի Սինոդն չը ծնանէր և Սահմանադրութիւնը լոկ եկեղեցականներէ կազմուած Կրօնական Ժողովն չստորագրէր իւր պարունակութեան մէջ։ Ինչո՞ւ չենք ուզեր հաւատալ. — վասն զի հայ եկեղեցականութիւնն ու ժողովրդականութիւնն այնպէս զանգուած են իրարու հետ, որ անհնարին է բաժանումն երեւակայել։ Եւ ահա այս զուգութիւնն իսկ Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելական աւանդապահութեան մէջ է։ Հայոց եկեղեցականութիւնը ոչ ղեւտական ցեղայետութեան և ոչ պապական կղերական յաջորդութեան դասակարգութիւն է, այլ ժողովրդէն ընտրուած, վաւերացած և ընդունուած պաշտօնէութիւն։ Աւելի պարզ ասենք, Հայաստանեայց Եկեղեցւոյ եկեղեցականութիւնը հռովմէականին չը նմանիր, ուր կղերը կ՚ընտրէ կղերականն՝ տեսակ մի փոխադրական իշխանութեամբ, այլ ժողովրդէն կը բղխի և ժողովրդին կը դառնայ։

Եկեղեցին արդէն նուիրագործած է յատկապէս եկեղեցական պաշտօնէից վերաբերեալ պաշտօններն, ինչպէս են սրբազան խորհրդներ մատակարարել, արարողութիւններ և ծէսեր կատարել և այլն. իսկ վարչական մասին՝ միշտ գործակից են իրարու հօտն և հովիւք։ Այսպէս կը ներկայանայ մեզ մեր Եկեղեցւոյ կեանքը, թէ պատմութեան մէջ, թէ աւանդութեան և թէ նոյն իսկ գործնականութեան։

Թաղային կամ ծխական եկեղեցեաց մէջ եկեղեցականի և աշխարհականի գործակցութիւնն ընդունելէն զկնի, տարակոյս չը կայ որ նոյնն ընդունելու է նա և եկեղեցական ա-

digitised by A.R.A.R.@

մենաքարձր փարչութեան մէջ։ Այս փարչական սկզբունքն ուռկան մ'է, որ եթէ թագաւորին կամ ծխական տնտեսութեան համար ձգուած է, կը նշանակէ թէ բոլոր քրիստոնէական ընկերութեան համար ձգուած է, եթէ եկեղեցական շինուածքի մի յարկին մէջ ընդունուած է, կը նշանակէ թէ միւս յարկերու մէջ մերժուած չէ ։

Արդեմն, ամենայն վստահութեամբ կարող ենք ասել, որ Կրօնական Ժողովն, իբրեւ փարչական ժողով, անշուշտ պէտք է որ եկեղեցականներէ և աշխարհականներէ կազմուած լինի. բայց միայն կրօնական բառն փոխելու է. որ խիստ անպատշաճ (չասենք անիմաստ) կերպով գործ դրուած է Սահմանադրութեան մէջ. Վասն զի յանուն կրօնական ժողովին վերապահած պարտաւորութիւնքն (Սահման. յօդ. 21. 22. 23. 24. 25. և 26.) գրեթէ ամենքն առ հասարակ ժողովրդի անհրաժեշտ միջամտութեամբ կատարուելիք պարտաւորութիւններ են, ինչպէս են Ազգին մէջ կրօնական զգայումն պարզացնել (որ կանոնաւոր դաստիարակութեան գործ է). Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անարատ պահպանել և բարեկարգութեանը հսկել (յորմէ ժողովուրդն անմասն չէ կարող լինիլ). քահանայից կացութիւնը լաւցնել (որ յատկապէս ժողովրդի գործ է). բանիբուն եկեղեցականներ հասցնել (որ աւելի ժողովրդի հոգացողութեան պաշտօն է, վասն զի եկեղեցականներն իրմէն կը բղխին և իրեն համար կը պատրաստուին). Ազգին մէջ ծագած կրօնական վէճերն քննել և լուծել, (ի՞նչ են կրօնական վէճերն). եկեղեցական համագումար ժողով կազմել (որ նորելուկ է Հայաստանեայց Եկեղեցւոյ փարչական դրութեան մէջ). խնդիրն անլուծանելի կարծուած ժամանակ Արարատեան մայր Աթոռին դիմել, (որպէս թէ Մայր Աթոռն իրաւունք ունենար, արտաքոյ եկեղեցական վարդապետութեան, դաւանութեան և կանոնաց՝ խնդիր լուծել), և այլն և այլն, զորս աւելորդ կը համարինք մի առ մի յիշել, որովհետեւ Սահմանադրութեան յօդուածներն արդէն ամեն մարդ կարող է կարդալ։

Բայց թէ ինչո՞ւ համար Եկեղեցին բարուք համարած է 'ի սկզբանէ անտի իւր փարչական գործերն եկեղեցականաց և աշխարհականաց գործակցութեամբ կատարել. ինչո՞ւ այս եղանակն ուրիշ ամեն եղանակներէն ընտրելագոյն համարուած է. և ի՞նչ օգուտներ ունի։ Այս պարագաներն եւս բացատրենք, որպէս զի ճշմարտութիւնն իւր ամբողջութեամբ փայլի և գեղեցկութիւնն ամենուն տեսանելի լինի.

Ա. Քրիստոնէական ամեն ճշմարիտ Եկեղեցի կարող չէ ուրանալ աշխարհականներուն այն իրաւունքն, զոր ունէին Քրիստոնէական նախկին Եկեղեցւոյն ժամանակ. Վասն զի նախկին Եկեղեցւոյ մէջ ժողովուրդն եկեղեցական գործերէն բնաւ զատուած չէր, այլ ընդհակառակն հոգեկան ամուր կապով կապուած էր։ Եկեղեցական փարչութեան զուտ կղերական մենափառութիւնն վերջին դարուց Պապականութեան ծնունդ է.

Բ. Թէ քաղաքական և թէ եկեղեցական փարչութեանց մէջ միատեսակ, միակողմանի, մի յատուկ պարապմունքով զբաղուած անդամներէ կազմուած ժողով կամ խորհուրդ միշտ անպատշաճ համարուած է և անհամապատասխան ընդհանուր կարօտու-

digitised by A.R.A.R.@

թեանց։ Ինչպէս որ քաղաքական վարչութեան մէջ ամէն ժողովներ լիկ իրաւագէտներէ և քաղաքագէտ մատենագիրներէ չեն կազմուիր, նոյնպէս և եկեղեցականին մէջ հարկ չկայ լիկ քարոզիչներէ և աստուածաբաններէ կազմել։ Վասնզի նոյն իսկ աստուածաբանք կարօտութի ունին հասարակաց դատողութեանը, քան որում ամէն մասնաւոր մշակութիւն միշտ կը տանի դէպ 'ի անձուկ գաղափարներ, և հարկ է անշուշտ ընդհանուր գաղափարներու հետ զանգել՝ պտղաբեր և արդիւնաւոր ընելու համար։ Մածուցիկ և սերտ կաւէն պտղաբեր հող պատրաստելու համար՝ պէտք է հետն աւազ խառնել, նոյնպէս եկեղեցական մարմնոյն մէջ հոգեւորաց հետ հարկ է աշխարհական խառնել. որպէս զի Եկեղեցին կատարելապէս ներկայացուի և ընդհանուր կարօտութիւններն լաւ հասկցուին։

Գ. Ինչպէս եկեղեցականաց, նոյնպէս և աշխարհականաց մէջ եւս կան ջերմեռանդն, Եկեղեցւոյ պայծառութեան նախանձախնդիր, մտացի, Ս. Գրոց հմուտ, բարի քրիստոնեայ և բարի քաղաքացի անհատներ, որոց գործակցիլն եկեղեցականաց՝ կատարեալ օրհնութիւն մ'է։

Դ. Ժողովուրդն Եկեղեցւոյ մայրենի ծոցէն չօտարացնելու համար, իւր սնուած կեդրոնէն գաղթելու առիթներ չը տալու համար, հարկ է որ նոյն կեդրոնը, նոյն հայրենիքն իւր գործունէութեան առջեւ բաց լինի և աւելի գրաւիչ՝ քան թէ գաղթականութիւնն։ Շատ բաւոր ժողովրդներ գաղթեցին Կաթոլիկութեան ծոցէն, որովհետեւ նոյն ծոցն իրենց համար անմատոյց էր և անսիրելի։ Մեղուները փեթակէն չը խորշեցնելու համար՝ պէտք է ազատ թողուլ, որ մեղր կազմեն փեթակին մէջ։ Այսպէս է աշխարհականաց միջամտութիւնը եկեղեցական գործոց մէջ։

Ե. Երբ եկեղեցական գործոց վարչութիւնը հոգեւորաց և ժողովրդի երեսփոխանաց աջակցութեամբ կը կատարուի, եկեղեցական և աշխարհական դասու յարձակումներ չեն լինիր, ոչ աշխարհականք կը դատապարտեն եկեղեցականներն, և ոչ եկեղեցականք՝ աշխարհականներն, այլ որովհետեւ երկուքն միասին կը գործեն, ուստի և երկոքեան միասին արժանի կը համարուին թէ փառաց և թէ անարգանաց։ Եկեղեցին, որ սիրոյ թագաւորութեան ներկայացուցիչն է աշխարհիս վրայ, ինչպէս կարող է, իւր կոչման հակառակ, բաժանել իւր զաւակներն, որ շարունակ զիրեար ատեն և անգանեն։

Զ. Եկեղեցւոյ բուն կոչումն է քրիստոնէական կեանք տարածել հասարակութեան մէջ, որպէս զի իւր առաքելական և աւետարանական բոլորանց մէջ պահպանուի և ընդհանուր արեգական տակ հասուննայ և կազմակերպի այն ընդհանուր կենսական զօրութիւնը, այն հասարակական դաշնակցութիւնը, որով Եկեղեցւոյ ամէն զաւակներն կարող լինին իրենց հասուն ճանաչողութեամբ ստութեան դէմ յարձակիլ և ճշմարտութեան թագաւորութիւնը յառաջացնել։

Արդ՝ Հասարակութեան մէջ որ և իցէ կեանք կենակցութեամբ կը տարածուի. ուրեմն ինչպէս կարող է Եկեղեցին կրօնական կամ քրիստոնէական կեանք տարածել իւր զաւակներուն մէջ, երբ բաժանումներ ընդունի իւր վարչութեան մէջ, որ տեսակ մի կեդրոն է կենաց տարածման։

Վերջաւորելով մեր խօսքը՝ հրապարակաւ կը հռչակեմք, որ Եկեղե-

digitised by A.R.A.R.@

ցին ազատ և ապահով լինելու համար, Եկեղեցին ամեն ներքին և արտաքին արհաւրաց դէմ հզօր կացուցանելու համար, հարկ է որ հօտր խորհրդակցի հովուին հետ եկեղեցական վարչութեան մէջ. ամեն մասամբ։ Այս է Բրիտանեական Նախկին Եկեղեցւոյ սկզբունքն. այս է մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ դարերով պահպանած վարչական եղանակն. այս է պատմութեան փաստերէն և նոյն իսկ մեր ժողովրդի կեանքէն հետախուզութեամբ հանուած ճշմարտութիւնն. և այս է, զոր պարտ է ճանաչել և գրկել ամեն Հայ, որ կը փափաքի հաւատարիմ ու անդադապահ մընալ իւր մայրենի Եկեղեցւոյ քրիստոնէական ճշմարիտ ուղւոյն.

ՎԵՐՍՏԻՆ

ԱՌ ԵՐԱԶԱՑՈՅՑԴՆ ԱՐՇԱԼՈՅՍ

Մասիս մէջ (Թիւ 10. 1871) քանանէն աւելի ծանրակշիռ հարցումներ առաջարկելով Արշալոյսին, Ս. Սինոդի դէմ հրատարակած իւր զրախօս դիտողութեանց և յօդուածոց նկատմամբ, պահանջած էինք, առանց փախուստ տալու պաշտպանել իւր հրատարակութիւնքն և առանց յաջ և յահեակ խոտորելոյ մի առ մի պատասխանել մեր հարցումներուն։

Արշալոյս (Թիւ 925), ըստ իւր սովորականութեան իբր 'ի պատասխանի Մասիսի գրուածքին՝ Զախորդ յարձակում վերնագրով յօդուած մի հրատարակած է, որոյ պարունակութիւնն պատ-

է

շաճ կը համարինք աչա համառօտագրութեամբ յառաջ բերել և ցոյց տալ՝ թէ որչափ անտեղի են և բուն խնդրոյ վերաբերութենէն արտաքոյ.

1. Արշալոյս չը հաւատար, որ Մասիս յօդուածն Միաբանութեան խորհրդակցութեամբ ու Ս. Պատրիարքի հաճութեամբ հրատարակուած է. ուստի և Եփեմերական մարգարէութեամբ կը գուշակէ որ յօդուածի հեղինակն անպարկեշտ յանցաւոր համարուելով պիտի դատապարտուի, ըստ որում գրուածոյն ոճն անգամ անվայել կը դատէ Կրօնական Միաբանութեն։

2. Արշալոյս, մեր հարցումներէն երկու հատն միայն յիշելով և միւսնին չը պատասխանելով, Եգիպտաբնակ Հայ հասարակութեան կը վերաբերի, կ'ըսէ, թող Մասիս խնդրած մեկնութիւններն և անոնց գիտնալը բանն է։ Իսկ ինքն ձեռք կ'առնու Մեսրոպ եպիսկոպոսի գրուածանց թելն և հնակարկատական ամենայն ճգամբ կը ջանայ կարկատել, որպէս թէ երբեւ օրինաւոր առաջնորդ գնացած է Մեսրոպն Եգիպտոս, նոյն իսկ յաջորդաբար Նոյէն Դ. Վ. Տէր. Նուպար փաշայէ հրաւիրեալ . . .

3. Արշալոյս, Եգիպտոսի և Աղէքսանդրիոյ կալուածներն ցարդ Ս. Աթոռին չը յանձնուելուն համար, յանցաւոր կը դատէ զնոյն իսկ Միաբանութիւնն, որ, որպէս թէ օրինաւոր փոխանորդագրով օրինաւոր փոխանորդ չը կարգեր, որ կալուածներն իրեն յանձնուին։

4. Արշալոյս, Յակոբեան եղբարց համարատուութեան խնդրոյն համար կ'ըսէ թէ՝ հնգամեայ հաշիւ տուած են Ն. Վ. Նուպար փաշային, որ և հրատարակուած է Արշալոյսի մէջ։

5. Արշալոյս կը ջանայ արդարացնել զինքն, որպէս թէ միշտ որդիական սէր ունեցած է Ս. Աթոռոյս Միա-



digitised by A.R.A.R.@

բանուԹեան վրայ․ կը զարմանայ որ Միօնի մէջ յօդուած հրատարակելով ճրագին վրայ յէրի ճըրըշքէնը․ փոխանակ ջուր թու-ֆելու, և կը յաւելու նաև, որ Պա-հիրէէն իրեն ղրկուած յօդուածի հը-րատարակուԹիւնն մերժելով՝ ի շնոր-հըս Երուսաղէմի՝ փչացուցած է իւր Եգիպտոսի բարեկամներն։

Արդ՝ ցանկալով պատասխանադ-րուԹեան գեղեցիկ դաս մի տալ Ար-շալոյսին, իւր յօդուածոյն պարունա-կուԹեան կէտերն մի առ մի յիշելէն զկնի, կը պատասխանենք ահա կար-գաւ, որ խելամուտ՝ Թէ որչափ ամօԹ է խմբագրի կամ գրագիրի մի համար խնդիր յարուցանել և պատասխա-նատուուԹեան ասպարիզէն փառաբար փախուստ տալ, այլ ընդ այլս երազներ երազելով։

Նախ՝ եԹէ երազայօդ չէ Արշալոյս, ինչո՞ն կը գուշակէ որ Միօնի յօդուածն Միաբանութեան և Մ․ Պատրիարքի գիտուԹեամբ հրատարակուած չէ։ Ինչո՞ն կը գուշակէ որ յօդուածագիրն պիտի դատապարտուի, և ի՞նչ հիման վրայ անվայել կը համարէ Միօնի գրուա-ծոյն ոճն Կրօնական Միաբանութեան։ Այն պառաւական երազատեսուԹը և անկապակից յառաջաբանով եԹէ կ'ուզէ Արշալոյս պակսեցնել Միօնի յօ-դուածոյն պարունակած ճշմարտու-Թեանց ոյժն ու զօրուԹիւնը, այդ-մասին շատ կը սխալի․ վասն զի իւր երազներն կարող չեն երբեք իրակա-նուԹեան արժէք ունենալ Հասարա-կուԹեան առջեւ․ և եԹէ ինքն կրօ-նական ոճոյ վայելչուԹեան ատելով կը հա-կինայ՝ շոյել և շողոքորԹել, ընդհա-կառակն մեք կը հաւնինք՝ փարիսե-ցիներն ու կեղծաւորներն դատապար-տել, սոփեստներն ու երազատեսնե-րըն ըմբերանել, անիրաւ ու խիղճը ծախուած փառաբաններն կշտամբ-բել, շահախնդիր շողոմարարներն ա-մօԹահար առնել, միով բանիւ, ըստ առաքելական պատուիրանին, յանդիմա-նել, սատել, և մխիԹարել, երբ իրենց մոլար ճանապարհը Թողլով՝ կը զղջան և կը խոստանան այլ ևս չմեղանչել։

Երկրորդ՝ Միօնի խնդրած մեկնու-Թիւններն ինչո՞ւ եգիպտաբնակ Հայ հասարակուԹեան կը վերաբերին և ո՛չ Արշալոյսին։ Երբ Արշալոյս անտա-րագիր ամբաստանուԹիւններ կը հը-րատարակէ Ս․ Ուխտիս Միաբանու-Թեան դէմ, և իւր կողմէն ո՛չ միայն չը յայտնէր որ պատասխանատու չէ, այլ ընդ հակառակն անանուն գրուածնե-րուն վրայ ջատագովական և արդարա-ցուցիչ կանխաբանուԹիւններ ես կը յաւելու իբրև խմբագիր, միԹէ այն յայտնի փաստաբանուԹեամբ չէ՞ն Թարկեր իւր անձն պատասխանատու-ուԹեան։ Մի՞ Թէ իրաւունք չու-նի՞նք ամենայն մասամբ զինքն մեղ-սակից համարել այն ամեն անուա-նարկուԹեանց, զորս շարունակ կը հրատարակէ ընդդէմ միաբանական Ուխտիս։ ԵԹէ համախոհ չէ ինքն Ար-շալոյս, ինչո՞ւ կը ծածկէ զրպարտիչ յօ-դուածագիրներու անունն և ինչո՞ւ իւր կողմէն կը վաւերացնէ նոցա գը-րածներն։

Ահա կը յայտնենք Արշալոյսին, որ մենք զինքն կը ճանաչենք միակ պա-տասխանատու և ո՛չ Եգիպտոսի հա-սարակուԹիւնը, և կ'առաջարկենք, որ առանց փախուստ տալու՝ կամ պատասխանէ մեր նախկին հարցում-ներուն, կամ յետս կոչէ իւր յանդու-գըն զրախօսուԹիւններն։ Իսկ դալով Մեսրոպ եպիսկոպոսի խնդրոյն, կը յայտնեմք Արշալոյսին, որ որչափ տագ-նապի, քրտնի ու տառապի, կարող չէ Մեսրոպի առաջնորդուԹեան օրինա-ւորուԹիւնը հաստատել։ Վասն զի

Ազգային վարչութեան ատենագրութենէն յայտնի է, որ Մեծարգոյ իբրև առաջնորդ չը գնաց Եգիպտոս, այլ իբրև հանդիսատես Սուէզիշի ջրանցքի բացման: Եւ ինչպէս կարող էր իբրև առաջնորդ երթալ, քանի որ չէր հրաժարած Տրապիզոնի վիճակի առաջնորդութենէն: Միթէ Վսեմ. Նուպար Փաշայի հրաւիրագիրն (որոյ ստուգութեան վրայ տարակոյս ունինք) կարո՞ղ է Մեծարգոյի առաջնորդութեան օրինաւորութեանը փաստ համարուիլ, մինչդեռ պաշտօնական գրութիւնք ներհակն կ՚աղաղակեն: Հետևապէս, եթէ մանրախուզիւ քննենք, Մեծարգոյի բռնած ընթացքին ոչ թէ քաջալերութեան, այլ դատապարտութեան արժանի է: Վասն զի, առանց պաշտօնական հաստատութեան, իւր անձն առաջնորդ հրատարակելով՝ յիշատակել տուած է եկեղեցեաց մէջ: Վասն զի ինքնակոչ անձնապաստանութեամբ խառնուած է եկեղեցւոյն ազգային գործոց. վասն զի, առաջնորդական կնիք գործ դրած և կոնդակներու միջամուխ եղած է. վասն զի, Աստուածատուր վարդապետի փոխանորդութեան դէմ մաքառած է, և արտաքոյ իւր Սուէզիշական հանգստեանութեան պաշտօնին՝ այնպիսի պարտաւորութիւններ ըրած է, որոնք երբէք կարող չեն արդարանալ Արքեպիսկոպոսի անհիմն ներբողներով և եբաղապատուած գովեստներով:

Երրորդ՝ Թեթևամտութիւն չէ՞ արդեօք Արքեպիսկոպոսի պնդելն, թէ օրինաւոր փոխանորդագիր և փոխանորդ չը լինելուն համար է, որ մինչև ցայսօր Ս. Աթոռոյն կալուածներն իրեն յանձնուած չեն: Միթէ Ս. Աթոռոյս Սրբազան Նախագահն անձամբ Եգիպտոս չէ՞ր. — ինչո՞ւ չը յանձնուեցան կալուածագրերն ու կալուածներն: Միթէ Իգնատիոս և Սիմէոն եպիսկոպոսներն Եգիպտոս չէի՞ն ՚ի կողմանէ Ազգին և Ս. Աթոռոյս. — ինչո՞ւ չը յանձնուեցան կալուածներն: Միթէ Աստուածատուր վարդապետն իբրև փոխանորդ Եգիպտոս չէ՞ր: Ինչ՞ն է որ Մեծարգոյ եպիսկոպոսի անպաշտօնագիր, անհրաւիրատակ և անվաւեր առաջնորդութիւնն ընդունուեցաւ և Աստուածատուր վարդապետի վաւերական փոխանորդութիւնըն չընդունուելէն զատ՝ ինքն ևս տառապանօք հալածուեցաւ:

Չորրորդ՝ Արքեպս մի կողմէն կը խոստովանի, որ Երուսաղէմի կալուածներն տակաւին յանձնուած չեն և միւս կողմէն կը հրատարակէ, որ Յակոբեանք իրենց համարատուութեան պարտքն արդէն կատարած են հնգամեայ հաշիւ տալով Վսեմ. Նուպար փաշային: Խղճմտութիւն կը հրաւիրենք զԱրքեպս և կը խնդրենք որ պարզէ մեզ իւր հակասութիւններն: Երուսաղէմի կալուածներն տակաւին իրեն յանձնուած չեն և հաշիւներն աւարտուած են: Երուսաղէմ 22 տարուան հաշիւ կը պահանջէ Յակոբեաններէն և նոքա հնգամեայ հաշիւ տուած են, և այն ոչ թէ Երուսաղէմին, այլ Նուպար Փաշային: Աթոռն կը պնդէ թէ՝ 30 տարիէն ՚ի վեր Երուսաղէմի Ս. Աթոռն իւր Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ կալուածներէն ամենևին եկամուտ ստացած չէ, թէ Յակոբեաններէն և թէ նախորդներէն, և իւր կալուածապետական իրաւունքէն ևս ցարդ զրկուած է: Արքեպս նախ կը հրատարակէ անամօթաբար, որ Երուսաղէմի Միաբանութեան յուղած խնդիրն կալուածական չէ (որ արդէն ա[illegible] կը հռչակէ) այլ առաջնորդականն, և ապա կը խոստովանի որ կալուածներն տակաւին յանձնուած չեն Երուսաղէմին:

digitised by A.R.A.R.@

Ինչ կը հասկցուի Աբըլըրոյ այս աչքակապութեան հանելուկներէն ։ Ինչո՞ւ այսպէս կը տատանի Աբըլըր ։ Ո՞վ պիտի մեկնէ այս հանելուկներն ։ Եգիպտաբնակ Հայ հասարակութիւնն (ի՞նչ պարտական է), թէ ինքն Աբըլըր ։ Սպասե՛նք և տեսնե՛նք ։

Հինգերորդ՝ Աբըլըր, Ս. Ուխտիս Միաբանութեան դէմ եղած ամեն զրպարտութեանց և ամբաստանութեանց շտեմարան դառնալէն զկնի, Ս. Աթոռոյս իրաւունքը մաշնելու համար՝ այնչափ փաստաբանելէն զկնի, ընդհանուր Ազգի արդար համոզման դէմ մասնաւորաց շահը պաշտպանելու համար՝ այնքան ընդդիմախօսելէն զկնի, եկած է այժմ քարոզելու, որ ինքն միշտ որդիական սէր և հարազատութիւն ունեցած է առ Միաբանութիւնն Ս. Երուսաղէմի ։ Զարմանալի սէր և տարօրինակ հարազատութիւն ։

Չը գիտենք՝ թէ որդիական սէր և հարազատութիւն բառերն ինչ նշանակութիւն ունին Աբըլըրոյ բառարանին մէջ։ Բայց մենք նկատողութեան առնլով Աբըլըրոյ հրատարակութիւններն (ընդդէմ Ս. Աթոռոյս Նախագահին, ընդդէմ Սիմէոն Ս. եպիսկոպոսին, ընդդէմ համօրէն միաբանական Ուխտիս, և մանաւանդ ընդդէմ իրաւանց Ս. Աթոռոյս դարաւոր և նուիրական իրաւանց) բացորձակ կը յայտնենք ահա, որ Աբըլըր անհարազատ է ոչ միայն սուրբ Աթոռոյս, այլ նաև համօրէն Հայ Ազգութեան. վասն զի Ազգի իրաւանց համար է որ Միաբանութիւնս կը բողոքէ, և Ազգի իրաւանց դէմ է, որ Աբըլըր կը փաստաբանէ լեզուագարութեամբ հանդերձ։

Միաբանութիւնս սոյն յատկական նկարագրով կը ճանաչէ զԱբըլըր, ուստի և կը ծանուցանէ, որ 'ի շնորհս Երուսաղէմի, բնաւ չը մերժէ Եգիպտոսի իւր բարեկամաց յօդուածներն և 'ի զուր չըփչացնէ նոցա սիրտն. այլ թող հրատարակէ որչափ և կամի, և մենք պատրաստ ենք ամենայն վստահութեամբ իւր աչքակապութիւններն հրապարակաւ նշաւակել և Ս. Աթոռոյս իրաւունքն պաշտպանելով ամեն ընդդիմախօսներ ամօթահար առնել։

## ՄԵԼԵԹԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՆԱՑԻ
## ԵՒ
## ԳՐԻԳՈՐԻՈՍ ՄԵՏՐԱՊՕԼԻՏ ՔԻՈՍԻ

Երկու Յոյն եպիսկոպոսներ, իրենց գրաւոր երկասիրութեամբ, հակապատկեր տեսարան մի կ'ընծայեն ուսումնական աշխարհին ։ Աթենայի եպիսկոպոսն, իւր քանի մի լեզուով թարգմանուած և Երուսաղէմի ներկայ Պատրիարքէն իբրև դասագիրք վաւերացած, Եկեղեցական Պատմութեան մէջ, խայտառակ կը դատապարտէ Հայաստանեայց Եկեղեցին, անլուր և զարհուրելի մոլորութեանց հետևողքը քարոզելով։ Իսկ Քիոսի եպիսկոպոսն, իւր Յունաց Պատմութեան Հայկական և Յունական Եկեղեցեաց գրքով բոլորովին տարբեր տեսութեամբ կը նայի Հայաստանեայց Եկեղեցւոյն վրայ, վասն զի, կըսէ. « Ուրիշ ազգ մը չը կայ, որ կրած ըլլայ այնքան քաղաքական և կրօնական հալածմունք, որքան Հայ ազգը. 'ի վերայ այսր ամենայնի՝ այս զերոր յաջորդող ահեղի փոթորիկներուն մէջ անսասան յարատևեց Քրիստոսի հաւատքին վրայ »։

Աթենայի եպիսկոպոսի Գրքին վրայ մենք արդէն խօսած ենք և պա-

digitised by A.R.A.R.@

բանաւորութիւնը Սիօնի միջոցաւ (1) ՚ի գիտողութիւն ազգայնոց հրատարակած. իսկ Պետրոսի եպիսկոպոսի երկասիրութեան վրայ հարեւանցի գաղափար միայն տուած ենք այն ծանօթութենէն, զոր Ս. Ն. Զօրաբեան Էֆէնտի, յունական թղթոյն լատիներէն թարգմանելով, հրատարակած է Մասիս պատուական լրագրի 1178 թուոյն մէջ։

Թէ և չունինք յիշեալ երկասիրութեան ամբողջ թարգմանութիւնն, որ կարօղանանք ամենայն մասամբ գիտողութեան առնուլ. սակայն գլխաւոր կէտ մի կայ, որ լոկ թարգմանուած և Մասիսի մէջ հրատարակուած լինելով, կարող ենք յառաջ բերել այս տեղ և անաչառ քննութեան ենթարկել։

Այս կէտն յունական և հայկական եկեղեցեաց միութեան համար եպիսկոպոս հեղինակի առաջարկած յանձնաժողովն է, որուն համար կ՚ըսէ. «Պէտք է Ա. յանձնաժողով մը հաստատել, որ նախապատրաստէ երկուց եկեղեցեաց մէջ եղած տարբերութեանց կարելի եղածին չափ համաձայնութիւնը։ Բ. քանի մի անօրէնութիւններ, և երկուստեք զիջումներ, հետեւելով միշտ ընդհանուր եկեղեցւոյն հին օրինակաց։

Այս յանձնաժողովն երկու կողմն լուսաւորեալ եկեղեցականներէն խառն ըլլալով, գլխաւոր տարբերութեանց նկատմամբ բանակցութեան սկսելու են, միշտ յառաջ գիծ և կանոն ունենալով Ս. Թէոփիլակտոս հայրապետին բանը թէ՝ «Ոչ ամենայն սովորութիւն կարէ բաժանել զեկեղեցին, այլ նոքա միայն, որ խոտոր արկանեն ընդ մէջ քրիստոնէական վարդապետութեան»։ Յիշեալ յանձնաժողովին արձանագրութիւնքը նախ պէտք է գիտողութեան առնուին երկու եկեղեցեաց հովուապետներէ՝ ՚ի մասնաւորի, որոնք յետոյ կրնան պաշտօնական բանակցութիւններ ընել Սինոդով, հաղորդելով միմեանց իրենց դաւանութիւնը մասնաւոր գրութեամբ և երկրորդական խնդրոց վրայ իրենց համաձայնութիւնը յայտնելով, քրիստոնէական ոգւով և սիրով իրենց պաշտօնական և սինոդական սուրբ որոշումներն, բայց իրենց իրաւասութեան տակ եղող եկեղեցեաց հաղորդեն և ստանան նոցա ընդհանուր հաւանութիւնը, ինչպէս որ օրէնք է։

Այսպէս ըլլալէն ետեւ, միութեան գործը աւարտուած կը համարուի երկու եկեղեցեաց սուրբ հայրապետաց ՚ի Քրիստոս համբուրովը և Ս. պատարագի ընդհանուր հաղորդակցութեամբը»։

Այս առաջարկութիւնն, ինչպէս կ՚երեւի, բովանդակ հեղինակութեան բուն եզրակացութիւնն ու նպատակն է։ Այնպէս որ, չենք սխալիր, եթէ ասենք, որ ամբողջ Գիրքն այն նպատակէն կամ բաղձանքէն ծնունդ առած է։ Այս բաղձանքով կը թղթակցէր երբեմն կայսրն Մանուէլ Ներսէս Շնորհալւոյն հետ։ Այս բաղձանքէն ծնած են պատմական բիւրաւոր անցքեր երկուց ազգաց և երկուց եկեղեցեաց մէջ, զորս աշխարհածանօթ լինելուն համար, անտեղի կը համարինք մի առ մի թուել։ Այս բաղձանքն նոր չէ ուրեմն, այլ շատ հին. բայց թէ ինչո՞ւ ցարդ իրագործուած չէ, քանի որ կայսերք ցանկացած և հետամուտ են ողոքանօք և սպառնալեօք, քանի՛ որ Պատրիարքունք բաղձացած և ջանացած են բանիւ և գրով, և քանի որ բազմաթիւ ժողովներ յուզած և վճիռներ արձակած են դարերով. այս ամենանուրբ և խորին ուշադրութեան արժանի կէտն աչքէ վրիպած է Գեր. հեղինակի տեսութենէն, որ հազարաւոր առաջարկութեանց ապարդիւն մնալն իմանալէն և խոստովանելէն զկնի՝ բարեհաճած է, կատարման անհնարութենէն պատմապէս դատապարտուած միութեան խնդիրն վերստին յուզել։

Կէտ մի կայ, ասացինք, որ Գեր. հեղինակի տեսութենէն վրիպած է։ Այս կէտը, թէ և մեք ուրիշ առթիւ բացատրած եմք Ամսագրիս մէջ(1), բայց հարկ կը համարիմք վերստին յիշել, որպէս զի եկեղեցեաց քրիստոնէական

(1) Տես Սիօն թիւ 5. 1871։

(1) Տես Սիօն թիւ 5. Տարբերութիւն կրօնական միութեան և միաբանութեան։

digitised by A.R.A.R.@

միութեան խորհուրդը լուսաբանելով ցոյց տանք թէ որչափ տարապարտ և անտեղի է նոյն նկատմամբ եղած առաջարկութիւնն ։

Ամէն եկեղեցիք մի էին մինչեւ հինգերորդ դարն և հետ զհետէ ըսկսան բաժնուիլ։ Ի՞նչ էր միութիւնը և ինչո՞ւ բաժնուեցան ։

Միութիւնը քրիստոնէից սէրն էր, իսկ բաժանումը՝ ատելութիւնը։ Միութիւնը Աւետարանի ոգին էր, իսկ բաժանումը՝ մարդկան։ Երբ մարդիկ չուզեցին սիրոյ և միութեան թագաւորութիւնը Աւետարանի մէջ որոնել, այլ ժողովոց կուսակցութեան և վիճաբանութեան, այնուհետեւ եկեղեցիները բաժնուեցան, և ներկայ ժամանակս մէջ կը տեսնենք՝ թէ մինչեւ ո՞ր աստիճան բազմաթիւ են և բազմատեսակ ։ Հետեւապէս, այն մարդիկն, որոնք միութեան կը բաղձան, միութիւնը Աւետարանի մէջ որոնելու են, և ոչ թէ ժողովներու կազմութեան և դաւանական խընդիրներու յուզման ։ Մենք երբ կը լսենք՝ թէ Անգղիական և Յունական (օրթոտոքս) եկեղեցիները կը բանակցին միութեան համար, կը ժպտինք. վասն զի հաստատ գիտենք, որ եկեղեցւոյ միութիւնը ոչ բանակցութեան գործ է, ոչ դաշնադրութեան, ոչ աստուածաբանից վճռոյ և ոչ դաւանական տարբերութեանց միակերպութեան, այլ գործ է աւետարանական հոգւոյ տարածման. Եթէ մենք լսէինք, որ Անգղիական և Յունական եկեղեցիներն, առանց երբէք բանակցելու, իւրաքանչիւրն իւր կողմէն ջանադիր են Աւետարանի ճշմարիտ սէրը և լոյսը ծաւալել, այն ժամանակ աւելի պիտի հաւատայինք միութեան. վասն զի պիտի խելամտէինք անշուշտ, որ մարդասիրութեամբ լցուած սրտերուն և ճշմարտութեամբ լուսաւորուած մտքերուն համար կարող չեն երբէք դաւանական կամ ծիսական տարբերութիւններն բաժանման ույժ և զօրութիւն ունենալ։

Տիեզերական պատմութիւնը բիւրաւոր փորձեր կը հանէ մեր առջեւ՝ թէ ինչո՞ւ ազգերն կամ տէրութիւններն շատ անգամ բոլորովին իրենց բաղձանքին հակառակ արդիւնք կը քաղեն ։ Օրինակի համար. քրիստոնէական Եկեղեցւոյ հանրական միութեանը փափաքող Հռովմէական եկեղեցին ինչո՞ւ իւր ծոցէն միլիօնաւոր դաւանողներ բաժնեց և կը բաժնէ։ Հայաստանեայց եկեղեցւոյ միութեանը բաղձացող յունական եկեղեցին ինչո՞ւ իւր ծոցէն Պուլղարները կը խորշեցնէ ։ Ի՞նչ է այս պատմական երեւութին պատճառը, եթէ ոչ նոյն իսկ բաղձանքի անբնական և մոլար լինելն, այսինքն փոխանակ անմահ սկզբունքի վրայ յենլոյ՝ արտաքին խարխուլ պարագաներու վրայ հիմնուիլն, զորս ժամանակը մի օրուան մէջ կը մաշէ ։

Միութեան յաւիտենական և անմահ սկզբունքը՝ սէրն է ։ Սիրով միացաւ Աստուած մարդկութեան հետ, սիրով միայն կարող են միանալ մարդիկ իրարու հետ և Աստուծոյ հետ ։ Այժմ քննենք և տեսնենք՝ թէ սէրն է արդեօք շարժառիթ, որ Հռովմէական եկեղեցին կը ջանայ ամէն եկեղեցիներ իւր հետ միացնել։ Սէրն է արդեօք շարժառիթ, որ յունական եկեղեցին կը փափաքի հայկական եկեղեցւոյ միութեանը։ Պիտի ԱՅՈ՛ պատասխանէինք այս հարցումներուն, եթէ անտեղեակ լինէինք այն նզովքներուն, բանադրանքներուն, անէծքներուն, և հէրէթիկոս, չարափառ ու [illegible] մակդիրներուն, զորս Հռովմէական և յունական եկեղեցիներն կը

digitised by A.R.A.R.@

տեղան՝ իրենց հետ չը միացեալ կամ (աւելի պարզ ասել) իրենց իշխանութեան չյարկացեալ եկեղեցեաց դէմ։

Բայց գուցէ առարկուի մեզ թէ՝ ատելութեան ու խիթ տւող խտրութիւնքն վերջնելու է, որպէս զի սէրը թագաւորէ։ Սակայն մենք կը պատասխանեմք, որ պայմանաւոր սէրը քրիստոնէական սէր չէ, այլ հեթանոսական։ Քրիստոնէութիւնը չանիծանէր, այլ կ'օրհնէ։ Քրիստոնէութիւնը միայն բարեկամին չը տար ողջոյն, այլ և թշնամւոյն։ Մի Նեստորան և մի փրկիչ խոստովանող եկեղեցեաց մէջ՝ ի՞նչ դաւանական տարբերութիւն կամ ծիսական խտրութիւն կարող է մեծ լինիլ քան զսէր, որ կարողանայ յաղթանակել և սիրոյ զօրութիւնը ունայնացնել։

Բոլորովին ցնորք կը համարինք մենք, եթէ պնդեն, որ սիրոյ և միութեան արգելքը դաւանական տարբերութիւնքն են։ Քիոսի Գեր. եպիսկոպոսն քանի մի տարբերութիւններ կը թուէ և այնպէս կը կարծէ, որ եթէ ժողովով վերնան նոյն տարբերութիւնքն, անշուշտ սէր և եղբայրութիւն կը թագաւորեն երկու ազգաց և եկեղեցեաց մէջ։ Շատ խախուտ է այս կարծիքը, որ 'ի հիմանց տապալելու համար՝ բաւական է միայն հարցնել թէ ամեն Յոյներ, որոնք դաւանութեան տարբերութիւն չունին և մի և նոյն եկեղեցւոյ կը պատկանին, միթէ ամենքեան առհասարակ զիրար կը սիրե՞ն. — ոչ երբեք. բայց եթէ դաւանութեան միակերպութիւնը լինէր սիրելու պայմանը անշուշտ պէտք է որ սիրէին։ Ուրեմն կ'երեւի որ սէրը սրտերու մշակութե և ազնուագործութեան մէջ որոնելու է, ոչ թէ ծէսերու միակերպութեան։

Այնպէս կարծենք թէ Գեր. Եպիսկոպոսի երեւակայած Յանձնաժողովը կազմեցաւ, աստուածաբանական քննութիւնքն կատարուեցան, երկուց եկեղեցեաց տարբերութիւնքն՝ փոխադարձ զիջողութեամբ անտարբերացան, երկուց ազգաց Սինոդներն և պատրիարքներն իրարու բանակցեցան ու համաձայնութեամբ զիրար համբուրեցին և սկսան պաշտօնապէս սոյն միութեան արգիւնքը դաւանագրքերու մէջ մուծանելէն զկնի, նա և եկեղեցեաց մէջ մուծանել։

Ի՞նչ կը կարծէ Գեր. եպիսկոպոսն, մի թէ սէրն ու եղբայրութիւնը կը թագաւորե՞ն երկու ազգաց մէջ։ Մենք կը հաւատայինք այսպիսի մի երեւակայական ժողովի երեւակայական արդեանց, եթէ հարիւրաւոր ժողովներուն պատմութիւնը (որոնք կատարուած են դարէ դար) բոլորովին տարբեր արդիւնք չը ցուցնէր մեզ։ Ի՞նչպէ՞ս կարող ենք գուշակել, որ Գեր. Եպիսկոպոսի առաջարկած ժողովն ևս չունենար նոյն հետեւութիւնն, ինչ որ ունեցած են միութեան համար եղած առաջին ժողովներն, այն է նոյն իսկ ազգակցաց մէջ բաժանմունք, երկպառակութիւնք, հերձուածք, այլովքն հանդերձ։ Բայց յայտնանէ, ինչ իրաւունքով քանի մի աստուածաբաններ և երկու հայրապետք ու սինոդականք սիրտ համարձակին իրենց որոշումները եկեղեցեաց մէջ մուծանել և բովանդակ ժողովուրդն ստիպել, որ հըպատակին նոյն որոշումներուն և վճիռներուն։ Չը գիտեմք՝ թէ այսպիսի մի որոշմունք ի՞նչ տպաւորութիւն կարող է ունենալ Յունական Եկեղեցւոյ զաւակաց վրայ. բայց մենք քաջ ճանաչելով մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ ժողովրդական սկզբունքը, գիտենք անկասկած, որ երբեք չընդունուիր նոյն եկեղեցւոյն մէջ, նոր

digitised by A.R.A.R.@

օրինակ որոշում մի, որչափ և անտարբեր բան՝ կարծուի։ Վասն զի եկեղեցին ժողովրդինն է և ոչ թէ քանի մը աստուածաբանից, Անտիոքականաց և Հայրապետաց, որոնք միայն աւանդապահ են Եկեղեցւոյ վարդապետութեան դաւանութեան և արարողութեանց։ Այս սկզբունքը, կարծեմ թէ անծանօթ պիտի չըլլինի նոյն իսկ Գեր. Եպիսկոպոսին, եթէ արդարեւ իւր երկասիրութեան մէջ ջանացած է 'ի մօտոյ ճանաչել Հայաստանեայց Եկեղեցին։ Հարկաւ գիտած կըլլինի նա, թէ ինչ ընդունելութիւն գտած են հայ ժողովրդի կողմէն քանի մի հայ վարդապետներ և հայրապետներ, որոնք համարձակած են դաւանական նոր տարբերութիւն մուծանել եկեղեցւոյ մէջ։

Բայց մեր դիտողութիւնը տակաւին չը վերջացուցած, տարակուսական խնդիր մի մեր առջեւն կ'ելնէ, թէ ինչո՞ւ արդեօք յունական եկեղեցին կը փափաքի հայկականին հետ միանալ և ոչ հռովմէականին։ Եթէ հայկական եկեղեցւոյ միութիւնն բաղձալի է, որ սակաւաթիւ ժողովուրդ միայն կը պարունակէ, ո՞չ ապաքէն հռովմէականինն առաւել բաղձալի պիտի լինի, որ միլիօնաւոր ժողովուրդներ և ազգեր իւր ծոցը կը կրէ, և մանաւանդ որ յունական եկեղեցին հայկականէն բաժնուելէն զկնի՝ քանի մի դար տակաւին անբաժան էր հռովմէականէն, և քանի մի ժողովոց վճիռներու երկոքեան միասին կ'անսան, մինչդեռ Հայաստանեայց եկեղեցին ամենեւին չը ճանաչեր նոյն ժողովները։

Ի՞նչ կընշանակէ այս յատուկ հետամտութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան համար։ Մենք, որոց համար լոկ բառերն աւելի արժէք ունին քան թէ բանաւորութիւնը, չիմանալով թէ ինչ պատմական հանգամանքներէ յառաջ եկած են Արեւելեան և Արեւմտեան եկեղեցի յորջորջումները Յունականաց և Հռովմէականաց մէջ, և տեսնելով թէ Հայաստանեայց եկեղեցին եւս Արեւելեան կը կոչուի Յունականին նման, սոյն տեղական կամ աշխարհագրական համանմանութենէն, աստուածաբանական համանմանութիւն կը հետեւցնեն, և գլխաւորապէս այս առթիւ կամ պատրուակաւ երկուց եկեղեցեաց միութեան կը հետամտին։ Զարմանալի՜ հետեւութիւն։ Եթէ Արեւմուտքի ամեն քրիստոնեայքն Հռովմէակա՞ն են որ Արեւելքի քրիստոնեայքն եւս նոյն պատճառաւ անշուշտ յունադաւան կամ յունական եկեղեցւոյն հետ միացեալ լինին։ Հապա Հիւսիսային և Հարաւային քրիստոնէից համար ինչ յատկանիշ որոշելու է, և ո՞վ պիտի որոշէ։

Երբ սոյնպիսի կրօնական միութեան հետեւամտութիւններ կը նշմարենք, իսկոյն Տէրութեանց քաղաքական միութեան համար գործադրած զանազան պատրուակներն կը ներկայանան մեզ, ինչպէս է Համասլաւեան, Համագերմանական և այլ միութեանց ձգտումներն, որոնք շարունակ կը յուզեն քաղաքագիտութեան տարեգրութեանց մէջ։ Չըգիտենք թէ՝ քաղաքականութիւնն փոխ կ'առնու արդեօք միութեան տենչանքը կրօնականութենէն, թէ կրօնականութիւնը՝ քաղաքականութենէն։ Միայն թէ վճռաբար կ'ասենք, որ երկու մթնոլորտին մէջ եւս միութեան տենչանքն ընդդէմ է բնութեան և ընդդէմ է ազատութեան և ընդդէմ խղճի, երբ անհատական ազատութիւնն կ'ընդունինք իբրեւ տարր ամեն ազատութեանց։ Ամեն միութիւն, որ անհատական ազատութեան

digitised by A.R.A.R.@

ծնունդ չէ, անկայուն է և ունայն։ Թո՛ղ քաղաքականութիւնը միութեան դաշինքներ և օրէնքներ ստորագրէ. թո՛ղ եկեղեցական ժողովներն միութեան վճիռներ արձակեն։ Օր մի ամենը կը խախտին։ Բայց երբ անհատները կրթուին, երբ իրենց ազատութեամբ ընկերական և կրօնական միութիւն կազմեն, միով բանիւ. երբ Ազատութեամբ 'ի Միութիւն դիմեն, այն միութիւնը անսասան կը մնայ։

Քրիստոնէութիւնը անհատական ազատութեան պաշտպան կրօնք մ'է. Քրիստոնէութիւնը անհատներուն կ'ուղղէ իւր յորդորներն, իւր պատուէրներն, իւր սկզբունքն ու վարդապետութիւնը, քաջ նախատեսելով, որ անհատներն են ընկերականութեան կամ հասարակութեան պատուանդանն, եւ ուր հաստատուն է այս պատուանդանն, այնտեղ հաստատուն է և ընկերականութիւնը. ուր լուսաւոր, սուրբ, բարի, արդար և ճշմարտասէր է Եկեղեցւոյ իւրաքանչիւր զաւակն, այնտեղ փառաւոր է և Եկեղեցին։

Արդ՝ այս էական պայմաններն համառօտիւ բացատրելէն զկնի՝ մի թէ հարկ կը մնա՞յ ասել, որ Քիոսի Գեր. եպիսկոպոսի, Յաղագս միութեան յունական և հայկական եկեղեցեաց, Գիրքն տարապարտ փաստ մ'է։ Մի՛ թէ հարկ կը մնա՞յ ասել, որ իւր ծրագրած և միութեան համար առաջարկած պայմաններն բոլորովին բռնաբարութիւն են քրիստոնէական ազատութեան, բաց որում քանի մի ժողովականք կամ սինոդականք պիտի ծանրանան հասարակութեան խղճի վրայ իրենց որոշումներով։

Մեք աւելի բարի և շահաւէտ ճանապարհ կ'առաջարկենք թէ Յոյներուն, թէ Հայերուն և թէ ամեն ազգաց, որ ջանան զօրացնել իրենց մէջ քրիստոնէական դաստիարակութեան ոգին, հալածել սնապաշտութիւնը, թագաւորեցնել ճշմարտութիւնը, մեռցնել ատելութեան ոգին և կենդանացնել սէրը։ Ա՛յս է ամենէն կարճ և անմոլար ուղին, որով ո՛չ միայն հայկական և յունական, այլ քրիստոնէական ընդհանուր Եկեղեցւոյ միութիւնը կը հաստատուի, որով բարքերը կը բարւոքանան, սիրտերը կը փափկանան, միտքերը կը լուսաւորին և հոգւով ու ճշմարտութեամբ երկրպագուքն կը բազմանան։ Մեք համոզուած ենք, որ եթէ Քիոսի Գեր. Մետրապօլիտն (առանց երեւակայական հեռաւոր բաղձանքներ սնուցանելու), այս կարճ ճանապարհով ընթանար, այսինքն եթէ ուղղակի Քիոսի Յոյն բնակիչներէն սկսեր բազմացնել ճշմարիտ երկրպագուաց թիւը, աւելի մեծ գործ պիտի գործած լինէր 'ի փառս Քրիստոնէութեան, քանթէ երկուց եկեղեցեաց միութեան անօգուտ խնդրոյն համար ստուար հեղինակութիւն մի հրատարակելով։

digitised by A.R.A.R.@

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ

### ԱՍՈՐԻՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ

### ՀԱՆԵԱԼ Ի ՀՆԱԳՈՅՆ ԳՐՉԱԳՐԷ

## ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

### Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Առաջին անգամ է, որ տպագրութեամբ լոյս կը տեսնէ Միխայէլի Ասորւոյ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆ ընդարձակ ծանօթութեամբք, որ և անշուշտ հետաքրքրական է ամեն բանասիրաց համար։ Տպուած է մաքուր թղթի վրայ և կը ծախուի թէ Ս. Աթոռոյս Գրադարանի և թէ Կ. Պօլսոյ Երուսաղէմատան մէջ։ Գին 16 դահեկան։

Նոյն այս ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆ Ս. Աթոռս տպագրած է նմանապէս տարբեր գրչագրի վրայ, առանց ընդարձակ ծանօթութեանց, բանասիրաց հետազօտութեան և համեմատութեան համար, որ և կը ծախուի ՚ի Գին 12 դահեկան։

digitised by A.R.A.R.@

# ՑԱՆԿ

## ՅՈՒՆՎԱՐ


Անցած օրեր եւ նոր օրեր. 1

Կարգադրութիւն առողջութեան. — Անցումն. — Քրտունք. — Փոփոխութիւն եղանակի. — Թացութիւն ոտից. — Գիշերային օդ. — Փոփոխութիւն ցուրտ եւ ջերմ եղանակի. — Դժուարաբոյժ հիւանդութիւնք. — Օիւբական ախտ. — Պատճառք. — Նշանք սոյն հիւանդութեան. — Զգուշութիւն. 5_9

Եկեղեցական վարժութիւն. 11

Վերստին առ ԵՐԱԶԱՑՈՅԶՆ Արշալուսոյ. 17

Մելետիոս եպիսկոպոս Աթենացի եւ Գրիգորիոս Մետրապոլիտ Քիոսի. 20

Նոր հրատարակութիւնք. 26


---

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով.

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ, հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի.

Գ. Զատ տետրակ առնել ուզողը, պէտք է ամէն մէկ տետրին չորս դահեկան վճարէ.

digitised by A.R.A.R.@